

891.71

S-80

~~021~~

092 - 25 | <sup>m</sup> 38

18 NOV 2011

9  
mnL

891-71

S-80

ԿԵՆԴՐԱՆԻ ԳԻԱԿ

ՀԵԿ ՆԻԿՈԼ. ՏՈՂՄՈՑ


# ԿԵՆԴՐԱՆԻ ԳԻԱԿ

Դրամա 6 գործողութեամբ եւ  
12 պատկերով

100+  
32331

Թարգմանեց  
Ն Ա Ր - Դ Ա Ս

ԹԻՖԼԻՍ  
Տպարան „Կուլտուրա“, Բարոնսկայա № 14.  
1911



## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Յեօդոր Վասիլիէիչ Պրոտասով (փեղեա)  
Ելիզաւետա Անդրէևնա Պրոտասովա  
(Լիզա), նրա կինը:  
Միօս, նրանց որդին:  
Աննա Պաւլովնա, Լիզայի մայրը:  
Սառա, նորատի աղջիկ, Լիզայի քոյ-

*բլ:*  
Վիկտոր Միխայլիչ Կարենին:  
Աննա Գևորգիինա Կարենինա:  
Քոյսու Սևագի Գևորգիինի Սքրեզկով:  
Մասա, նորատի գնչուհի:  
Եւան Մակարովիչ, ծիր՝  
գնչու:  
Եւան Մակարովիչ, ծիր՝  
պառաւ գնչուհի:  
Մաշայի  
Ճնողները:

Օժիցեր:  
Երածիօս:  
Ա. գնչու:  
Բ. գնչու:  
Գևորգիի:  
Գևորգիներ և գնչուիներ (երգեցիկ  
խումբ):

Բժիօկ:  
Միխայլի Սլեխսանդրովիչ Աքենմով:  
Սամիով }  
Ռուսկինիչ } Ֆեղեայի բարեկամները:  
Կորոսկով }  
Եւան Պետրովիչ Սլեխսանդրով:  
Վազնեսենինի, Կարենինի քարտուղա-

*բլ:*  
Պետուօկով, նկարիչ:  
Արեմիին:  
Մարտառոր առանձին կարինետում:  
Ապաստոր պանդոկում:

Պանդոկառէր:  
Քաղաքապահ ոսթիկան:  
Դասական բնեիչ:  
Միջնիկով:  
Դասական բնեիչի գործավար:  
Սուրհանդակ:  
Երիտասարդ փաստաբան:  
Պետրոսին, փաստաբան:  
Տիկին:  
Օժիցեր:  
Դասական պաօտօնեայ:  
Պրօտասովների դայեակ:  
Պրօտասովների սպասուեի:  
Սաքեմովի լամէյ:  
Կարենինների լամէյ:

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ 1.

### ՊԱՏԿԵՐ 1-Ի Ն

Գործողութիւնը կատարում է մայրաքաղաքում, Պրոտասովի ընականում: Բեմը ներկայացնում է փոքրիկ սեղանատուն:

Տ Ե Ս Ի 1.

Աննա Պաւլովնա, լիքը, սպիտակահեր կին, կորսէթով, նստած է մենակ թէյի սեղանի մօտ:

Տ Ե Ս Ի 1. II.

Աննա Պաւլովնա և դայեակ ։ (Ձեւ-նոցը ձեռքին):

Դայեակ.—Կարելի՞ է մի քիչ ջուր վերցնել:

Աննա Պաւլ.—Կարելի է: Ի՞նչպէս է Միշէկան:

Դայեակ.—Անհանգիստ է: Դրանից վաս ըան չկայ, երբ տիրուհին ինքն է ծիծ տալիս: Այնտեղ նա իր գարգերն ունի, իսկ երեխան տանջւում է: Ել ի՞նչ կաթ պիտի ունենայ, երբ ողջ գիշերներ չի քնում, լալիս է:

Աննա Պաւլ.—Բայց, կարծեմ, հիմա հանգստացել է:

Դայեակ.—Լաւ հանգստութիւն է: Մարդ խղճահարւում է նայի: Ինչոր գրում էր ու լալիս:

Տ Ե Ս Ի 1. III.

Աննա Պաւլովնա, դայեակ և Սաօս (մոնում է):

Սաօս (լայեակին).—Լիզան ձեզ է որոնում:

Դայեակ.—Գնում եմ, գնում: (Դայեակը դուրս է զետում):

## ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ և ՍԱՅԱ:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Դայեակն ասում է, որ նա շարունակ լալիս է: Այդ ի՞նչպէս է, որ չի կարողանում հանգստանալ:

ՍԱՅԱ.—Զարմանալի կին էք, մամա: Թողնել ամուսնուն, իր զաւակի հօրը, և դուք ուզում էք, որ հանգիստ լինի:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Հանգիստ չէ: Ինչ որ եղել է, նղել է: Եթէ ես, որ մայրն եմ, ոչ թէ միայն թոյլ եմ տուել, այլ և ուրախանում եմ, որ աղջիկս ձգում է ամուսնուն,—նշանակում է, որ ամուսինը արժանի է այդ բանին: Պէտք է ուրախանալ, և ոչ թէ տիսրել, որ կարողանում ես ազատուել այդպիսի վատ մարդուց, ազատուել այդպիսի բարի պատուղից:

ՍԱՅԱ.—Մամա, ինչո՞ւ էք խօսում այդպէս: Խօ զիտէք, որ այդ ճիշտ չէ: Նա վատ չէ, այլ, ընդհակառակը, զարմանալի, զարմանալի մարդ է, չնայելով իր թուլութիւններին:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Հա, հէնց զարմանալի մարդ: Հէնց որ ձեռքին փող կայ, —իրենը, թէ ուրիշինը...

ՍԱՅԱ.—Մամա, նա երբէք ուրիշի փողերը չի վերցրել:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Ողջ մէկ է, կնոջ փողերը:

ՍԱՅԱ.—Բայց չէ որ նա իր ամբողջ կարողութիւնը կնոջն է տուել:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Չէ մի, չտար, քանի որ զիտէ, որ բոլորը պիտի փչացնի:

ՍԱՅԱ.—Կըփչացնի, թէ չի փչացնի, —չզիտեմ, ես միայն զիտեմ, որ չի կարելի բաժանուել ամուսնուց և մանաւանդ այնպիսի ամուսնուց, որպիսին Ֆեդեան է:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Քեզ որ նայենք, պէտք է սպասենք, որ նա ունեցած-չունե-

ցածը ուտի վերջացնի և իր գնչուհի-սիրուհիներին տուն բերի:

ՍԱՅԱ.—Նա սիրուհիներ չունի:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Հէնց ցաւն էլ այդ է, որ նա ձեզ ամենքիդ էլ խելքահան է արել: Բայց ոչ ինձ, ոչ, ներողութիւն կանես: Ես նրան ճանաչում եմ, և նա զիտէ այդ: Լիզայի տեղը որ լինէի, ոչ թէ այժմ, այլ մի տարի առաջ արդէն կըթողնէի նրան:

ՍԱՅԱ.—Ի՞նչպէս դուք այդ հեշտ էք ասում:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Ոչ, հեշտ չեմ ասում: Հեշտ չէ, որ մայրն իր աղջկան ամուսնուց բաժանուած տեսնէ: Հաւատա, շատ հեշտ չէ: Բայց այդ տեելի լաւ է, քան թէ մի ջահէլ կեանք փչանայ: Չէ, շընորհակալ եմ Աստծոց, որ Լիզան այժմ վճռել է, և ամեն ինչ վերջացած է:

ՍԱՅԱ.—Գուցէ և չի վերջացած:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Հա: Թող մի ապահովան տայ:

ՍԱՅԱ.—Ցեառյ այդ լաւ կըլինի:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Այն կըլինի, որ Լիզան ջահէլ է և դեռ ես կարող է բաղդաւոր լինել:

ՍԱՅԱ.—Ախ, մամա, այդ սարսափելի է, ինչ որ ասում էք. Լիզան չի կարող ուրիշի սիրել:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Ինչո՞ւ չի կարող: Եթէ ազատ կըլինի: Կըդանուեն ձեր ֆեղեայից էլ հազարապատիկ աւելի լաւ մարդիկ և բաղդաւոր կըլինին, որ ամուսնանան Լիզայի հետ:

ՍԱՅԱ.—Մամա, այդ լաւ չէ: Դուք, խօ ես զիտեմ, մտածում էք Վիկտոր Կարենինի մասին:

ԱՅԻՆԱ ՊԱԿՐՈՎԾԱ.—Ի՞նչո՞ւ չպիտի մտածեմ նրա մասին: Տասը տարի է, որ նա սիրում է Լիզային, և Լիզան էլ սիրում է նրան:

**Սաօա.**—Աիրում է, բայց ոչ այնպէս, ինչպէս ամուսնուն: Դա մանկական հասակից ի վեր շարունակուող բարեկամութիւնները: Դու ասա միայն, որ արգելքներ չինին:

**Ս.Յնա Պատ.**—Գիտե՞նք մենք այդ բարեկամութիւնները: Դու ասա միայն, որ արգելքներ չինին:

Տ Ե Ս Ի Լ V.

**Ս.Յնա Պատովնա, Սաօա:** Մանում է սպասուիի:

**Ս.Յնա Պատ.**—Ի՞նչ ես ուզում:

**Սպասուիի.**—Ճիրուհին գոհապանի ձեռքով նամակ էր ուղարկել Վիկտոր Միխայլովիչին:

**Ս.Յնա Պատ.**—Ի՞նչ տիրուհի:

**Սպասուիի.**—Ելիզաւէտա Անդրէևնան, տիրուհի:

**Ս.Յնա Պատ.**—Յետի՞յ:

**Սպասուիի.**—Վիկտոր Միխայլովիչը հրամայել է ասել, որ այս ըոսէիս կը գայ ինքը:

**Ս.Յնա Պատ.** (զարմացած). — Հէնց նոր նրա մասին էինք խօսում: Միայն թէ չեմ հասկանում ինչու: (Սաշային) Դու չգիտե՞ս:

**Սաօա.**—Գուցէ գիտեմ, գուցէ և չգիտեմ:

**Ս.Յնա Պատ.**—Միշտ գաղտնիքներ...

**Սաօա.**—Ելիզան կըգայ, նա կասի ձեզ:

**Ս.Յնա Պատ.** (զլուխը շարժելով, սպասուհուն).—Իսկ հեշտահոը պէտք է տաքացնել: Առ տար, Դունեաշա: (Սպասուհին վերցնում է հեշտահոը եւ զնում է):

Տ Ե Ս Ի Լ VI.

**Ս.Յնա Պատովնա և Սաօա:**

**Ս.Յնա Պատ.** (Սաշային, որ վեր է կացել եւ զնում է).—Հէնց այնպէս էլ դուրս եկաւ, ինչպէս որ ասում էր. իսկոյն ուղարկել է նրա ետելից:

**Սաօա.**—Ուղարկել է, գուցէ, բոլորովին ոչ այն նպաստակով:

**Ս.Յնա Պատ.**—Բաս ինչու է ուղարկել:

**Սաօա.**—Այժմ, այս ըոսէին, կարենինը նրա համար նոյնն է, ինչ որ Տրիփոնովնան:

**Ս.Յնա Պատ.**—Այ կըտեսնես: Զեմ ճանաչում նրան, ինչ է: Նա կանչում է կարենինին, ուզում է, որ միսիթարի իրեն:

**Սաօա.**—Ախ, մամա, ինչքան քիչ էք ճանաչում նրան, որ կարողանում էք կարծել, թէ...

**Ս.Յնա Պատ.**—Այ կըտեսնես: Եւ ես շատ, շատ ուրախ եմ:

**Սաօա.**—Կըտեսնենք: (Երգում է եւ զնում):

Տ Ե Ս Ի Լ VII.

**Ս.Յնա Պատովնա մինակ:**

**Ս.Յնա Պատ.** (շարժում) Է զլուխը եւ փնջինթում).—Շատ լաւ, թող այդպէս լինի: Շատ լաւ, թող այդպէս լինի: Է՛ք...

Տ Ե Ս Ի Լ VIII.

**Ս.Յնա Պատովնա և սպասուիի** (մտնում է):

**Սպասուիի.**—Վիկտոր Միխայլովիչն եկաւ:

**Ս.Յնա Պատ.**—Դէ, էլ ի՞նչ: Ներս հրամիրի և իմաց տուր տիրուհուն:

(Սպասուհին լրուս է զնում խորքի դոնից):

Տ Ե Ս Ի Լ IX.

**Ս.Յնա Պատովնա եւ Վիկտոր Կարենին:**

**Վիկտ.** Կարենին (մտնում է եւ ըսրեւում Աննա Պալովնային).—Ելիզաւէտա Անդրէևնան նամակ էր ուղարկել ինձ, որ գամ: Իսկ ես առանց այդ էլ ուզում էի գալ ձեզ մօտ այս

երեկոյ, այնպէս որ շատ ուրախ եմ...  
Ելիզաւէտա Անդրէենան առօղջ է:

Ա.Յնա Պատլ.— Առողջ է: Երեխան մի  
քիչ անհանգստանում է: Այս ըռպէիս  
կըգայ: (Ժխովը): Այս, այս, ծանր օ-  
րերի ենք հասել... Դուք խօ ամեն  
բան գիտէք:

Կարեն.— Գիտեմ: Զէ՞ որ ևս այստեղ  
էի երեկ չէ մէկէլ օրը, երբ նրանից  
նամակ էր ստացուել: Բայց միթէ այդ  
այդպէս էլ վճռուած է անդարձ:

Ա.Յնա Պատլ.— Անշառշտ: Ի հարկէ: Նո-  
րեց քաշել այս բոլորը սարսափելի  
բան կըլինէր:

Կարեն.— Այս, ահա որտեղ է ասուած՝  
տասն անգամ չափիր, մի անգամ  
կտրիր: Կտրել կենդանւոյն շատ դըժ-  
ւար է:

Ա.Յնա Պատլ.— Ի՞նարկէ, դժուար է:  
Բայց չէ՞ որ նրանց ամուսնութիւնը  
վաղուց արդէն խախտուած էր: Այն-  
պէս որ քանդելն այնքան էլ դժուար  
չէր, որքան կարծւում էր: Նա ինքն  
էլ հասկանում է, որ այն բոլորից յե-  
տոյ, ինչ որ պատահել է, ինքն արդէն  
չի կարող վերադառնալ:

Կարեն.— Բայց ինչու:

Ա.Յնա Պատլ.— Ի՞նչպէս թէ ինչու: Իր  
այն բոլոր զգուելի արարքներից յետոյ,  
այն բանից յետոյ, երբ նա երդւում  
էր, թէ այլ ևս չի անի, և եթէ անի,  
ինքն իսկ կըզրկի իրեն ամուսնու բո-  
լոր իրաւունքներից և կնոջը կատա-  
րեալ ազատութիւն կըտայ...

Կարեն.— Այս, բայց ի՞նչ ազատու-  
թիւն կարող է լինել մի կնոջ համար,  
որ կապուած է ամուսնութեամբ:

Ա.Յնա Պատլ.— Ապահարզան: Նա խոս-  
տացել է ապահարզան տալ, և մենք  
կըպնդենք:

Կարեն.— Այս, բայց Ելիզաւէտա Ան-  
դրէենան այնպէս սիրում էր նրան...

Ա.Յնա Պատլ.— Ախ, նըա սէրն այն-  
պիսի փորձութիւնների է ենթարկուել,  
որ հազիւ թէ այդ սիրուց որևէ բան  
լինի մնացած: Էլ արբեցողութիւն,  
էլ խարեբայութիւններ, էլ անհաւա-  
տարմութիւններ: Կարելի՞ է միթէ սի-  
րել այդպիսի ամուսնու:

Կարեն.— Սիրոյ համար ամեն բան  
կարելի է:

Ա.Յնա Պատլ.— Դուք ասում էք՝ սի-  
րել, բայց ի՞նչպէս կարելի է սիրել մի  
այդպիսի փալաս-մարդու, որի վրայոչ  
մի վստահութիւն չի կարելի ունենալ:  
Գիտէք բանն ինչումն է... (Ցետ է  
նայում դէսպի լրուղ եւ շտապում է  
պատմել): Գործերը խանգարուել են,  
ամեն բան գրաւ է գրուած, վճարելու  
փող չկայ, վերջապէս, հօրելլբայրն  
ուղարկում է երկու հազար, տոկոսնե-  
րը վճարելու: Նա տանում է այդ փո-  
ղերը և կորչում: Կինը նստած է հի-  
ւանդ երեխան ձեռին, սպասում է, և,  
վերջապէս, նամակ է ստացում, որ  
սպիտակեղինն ու իրերն ուղարկենք  
իրեն:

Կարեն.— Այս, այս, գիտեմ:

Տ Ե Ս Ի Լ Խ.

Ա.Յնա Պատլովնա, Կարենին:

Մանում են Լիզա և Սաօա:

Ա.Յնա Պատլ.— Ահա, կանչել էիր, և  
վիկտոր Միխայլովիչն եկել է:

Կարեն.— Ինձ մի փոքր ուշացրին:  
(Բարենում է քոյլերին):

Լիզա.— Ծնորհակալ եմ: Մի մեծ  
բան սկսի ինգրեմ ձեզնից: Ուրիշ  
մարդ չկայ, որին դիմեմ, բացի ձեզ-  
նից:

Կարեն.— Կանեմ ամեն բան, ինչ որ  
կարող եմ:

Լիզա.— Դուք խօ ամեն բան գիտէք...

Կարեն.—Այս, գիտեմ:

Աննա Պաւլ.—Ուրէմն ես կըհեռանամ: (Սաշային): Եկ գնանք, թողնենք սրանց մենակ: (Դուրս է զնում՝ Սաշայի հետ):

Տ Ե Ս Ի Հ. XI.

Լիգա և Կարենին:

Լիգա.—Այս, նա ինձ նամակ է գրել, որ ամեն բան վերջացած է համարում: Ես (զսպում է արտասուզը) այնպէս էի վիրաւորուած, այնպէս... մի խօսքով, ես համաձայնուեցի բաժանուել... և պատասխանեցի, որ ընդունում եմ իր մերժումը:

Կարեն.—Իսկ այժմ զղջում էք:

Լիգա.—Այս, ես զգացի, որ վատ բան եմ անում, որ ես չեմ կարող: Էլի այնպէս լաւ է, քան թէ բաժանուեմ նրանից: Մի խօսքով, տուէք նրան այս նամակը: Խնդրում եմ, վիկաոր... տուէք նրան այս նամակը և ասացէք... և բերեցէք նրան:

Կարեն. (զարմացած).—Այս, բայց ի՞նչպէս:

Լիգա.—Ասացէք, որ ես խնդրում եմ ամեն բան մոռանայ և վերադասնայ: Ես կարող էի նամակն ուղղակի ուղարկել նրան: Բայց ես ճանաչում եմ նրան. Նրա հոգու առաջին շարժումը, ինչպէս միշտ, լաւ կըլինի, բայց յետոյ որևէ մէկի ազդեցութեան տակ միտքը կըփոխի և այն չի անի, ինչ որ ուզում է:

Կարեն.—Կանեմ, ինչ որ կարող եմ:

Լիգա.—Դուք զարմանում էք, որ ես հէնց ձեզ եմ խնդրում:

Կարեն.—Ոչ... ասենք, պէտք է ճիշտ ասեմ. այս, զարմանում եմ...

Լիգա.—Բայց չէք նեղանում:

Կարեն.—Միթէ ես կարող եմ նիզանալ ձեզնից:

Լիգա.—Ես ինդրեցի ձեզ նրա համար, որ գիտեմ սիրում էք նրան:

Կարեն.—Նրան էլ, ձեզ էլ: Դուք գիտէք այդ: Եւ ինձ համար չէ, որ սիրում եմ, այլ ձեզ համար: Եւ ես շնորհակալ եմ ձեզնից, որ դոք հաւատում էք ինձ: Կանեմ, ինչ որ կարող եմ:

Լիգա.—Գիտեմ: Ես ձեզ ամեն բան կասեմ. այսօր գնացել էի Աֆրեմովի մօտ, որ իմանամ որտեղ է նա: Ասացին, որ գնացել է գնչուների մօտ: Այս բանից է ահա, որ վախենում եմ: Գնչուներով տարուելուցն է, որ վախենում եմ: Գիտեմ, որ եթէ ժամանակին յետ չկանգնեցնեն, կըտարուի: Ահա հէնց այս էլ պէտք է անել: Ուրեմն կըդնաք:

Կարեն.—Ի հարկէ, իսկոյն:

Լիգա.—Գնացէք, գտէք նրան և ասացէք, որ ամեն բան մոռացուած է, որ ես սպասում եմ նրան:

Կարեն. (վեր է կենում).—Բայց որտեղ որոնեմ նրան:

Լիգա.—Նա գնչուների մօտ է: Ես ինքս այնտեղ էի: Դուան մօտ էի, ուզում էի նամակն ուղարկել, յետոյ թուղի մտադրութիւնս և վճռեցի, որ ձեզ խնդրեմ... Ահա հասցէն: Այսպէս ուրեմն, ասացէք նրան, որ վերադառնայ, որ ոչինչ չի եղել, որ ամեն բան մոռացուած է: Արէք այդ ի սէր այն բանի, որ սիրում էք նրան և բարեկամ էք մեզ:

Կարեն.—Կանեմ ամեն բան, ինչ որ կարող եմ: (Ողջունում է եւ զնում):

Տ Ե Ս Ի Հ. XII.

Լիգա.—Զեմ կարող, չեմ կարող! Էլի այնպէս լաւ է, քան թէ... Զեմ կարող:

Լիզա, մտնում է Սաօս:

Սաօս.—Հը, ուզարկեցի՞ր,  
(Հիզան զիսով դրական շարժում՝ է  
անում):

Սաօս.—Եւ նա համաձայնե՞ց:

Լիզա.—Ի հարկէ:

Սաօս.—Ինչո՞ւ նրան: Զեմ հասկա-  
նում:

Լիզա.—Բաս հեմ:

Սաօս.—Բայց դու խօ զիտե՞ս, որ  
նա սիրահարուած է քեզ վրայ:

Լիզա.—Այդ ամենը կար և անցաւ:  
Բայց հեմ ես ուզում, որ խնդրէի: Ի՞նչ  
ես կարծում, կը վերադառնայ:

Սաօս.—Ես հաւստացած եմ, որով-  
հետե...

Լիզա, Սաօս, մտնում է Աննա Պաւլովնա:  
(Սաշան լուսմ է):

Աննա Պաւլ.—Իսկ Վիկտոր Միխայ-  
լովիչը որտեղ է:

Լիզա.—Գնաց:

Աննա Պաւլ.—Ի՞նչպէս թէ գնաց:

Լիզա.—Ես խնդրեցի նրան, որ խըն-  
դիրքս կատարի:

Աննա Պաւլ.—Ի՞նչ խնդիրք: Դար-  
ձեալ գաղտնիք:

Լիզա.—Գաղտնիք չէ, այլ պարզա-  
պէս ինցը բացի, որ իր ձեռքով յանձնի  
նամակը ֆեղեային:

Աննա Պաւլ.—Ֆեղիային: Ֆեօդոր  
Վասիլեիչին:

Լիզա.—Այս, ֆեղեային:

Աննա Պաւլ.—Ես կարծում էի, թէ  
ձեր միջն բոլոր յարաբերութիւնները  
վերջացած են:

Լիզա.—Ես չեմ կարող բաժանուել  
նրանից:

Աննա Պաւլ.—Ի՞նչպէս. ամեն բան  
ուզում ես սկսել նորից:

Լիզա.—Ուզում էի, աշխատում էի,  
բայց չեմ կարող: Ինչ ուզում էք, կա-  
նեմ, միայն թէ չբաժանուեմ նրանից:

Աննա Պաւլ.—Ուրեմն ի՞նչ, ուզում  
ես վերադարձնել նրան:

Լիզա.—Այս:

Աննա Պաւլ.—Նորից տուն թողնել  
այդ գարշելի՞ մարդուն:

Լիզա.—Մամա, ես խնդրում եմ ձեզ,  
որ չխօսէք այդպէս իմ ամուսնու մա-  
սին:

Աննա Պաւլ.—Նա ամուսինդ էր:

Լիզա.—Ոչ, այժմ էլ իմ ամուսինն է:

Աննա Պաւլ.—Փող վատնող, արբե-  
ցող, անբարոյական, և դու չես կարող  
նրանից բաժանուել:

Լիզա.—Ինչո՞ւ էք ինձ տանջում:  
Առանց այն էլ տանջում եմ, իսկ  
դուք կարծես զիտմամբ ուզում էք ա-  
ւելի տանջուլ:

Աննա Պաւլ.—Ես եմ տանջում:  
Ուրեմն ես կը գնամ: Զեմ կարող տես-  
նել այս:

Լիզա (լուսմ է):

Աննա Պաւլ.—Ես տեսնում եմ, որ  
դուք այդ էք ուզում, որ ես ձեզ խան-  
գարում եմ: Զեմ կարող ես ապրել:  
Ոչինչ չեմ հասկանում ձեզնից: Այս  
բոլորը նոր բան է: Մէկ վճռում ես  
բաժանուել, յետոյ յանկարծ ապապրում  
ես մի մարդու, որը սիրահարուած է  
քեզ վրայ...

Լիզա.—Այդպիսի բան չկայ:

Աննա Պաւլ.—Կարենինը քեզ անա-  
ջարկ է արել... և դու նրան ուզար-  
կում ես մարդուդ ետեից: Այս ի՞նչ է,  
որ խանգոտութիւն յարուցանես:

Լիզա.—Մամա, այդ սարսափելի է,  
ինչ որ ասում էք: Թողէք ինձ:

Աննա Պաւլ.—Այդպէս մօրդ դուրս  
արա տանից, իսկ անբարոյական մար-  
դուդ ներս թող: Ես չեմ էլ սպասի:

Մնաք բարեաւ, Աստուած ձեզ հետ,  
ինչ ուզում էք՝ արեք:

(Քնում է, դուռը շրխկացնելով):

S E U H L XV.

Լիզա (ընկնում է աթոռի վրայ).—  
Այս էր պակաս:

Սաօա.—Վնաս չունի: Ամեն բան  
լաւ կը լինի: Մամային մենք կը հան-  
գատացնենք:

S E U H L XVI.

Լիզա, Սաօա և Ս. Բ. Պատրիժնա  
(անցնում է):

Ս. Բ. Պատրի. —Դունեաշա, իմ չեմո-  
դանը:

Սաօա.—Մամա: Լսեցէք: (Քնում է  
նրա ետեւից. աչքով է անում քրոջը):  
(Վարագոյր)

1002  
32331

## Պ Ա Տ Կ Ե Ր 2-Ր Պ

S E U H L I.

Սենեակ գնչուների մօտ: Երգեցիկ  
խումբը երգում է «Կանաւէլա»: Ժե-  
ղան պառկած է զահատրակի վրայ  
երեսն ի վայր առանց սիրտուկի:  
Ա. Յ. Ե. Խ. Ա. Հ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.  
Նենակ հնձած է աթոռին երգը  
սկսողի (զայեվալա) ղիմաց: Մի օքի-  
ցեր սեղանի մօտ, որի վրայ շամ-  
պայն եւ բաժակներ են դրուած: Նոյն  
տեղ մի երաժիշտ զրում է:

Ա. Յ. Ե. Խ. Ա. Հ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.  
Ֆեղեա. — Ձեղեա, քնած ես:  
Ֆեղեա (վեր է կենում). — Մի խօ-  
սէք: Այժմ «Հե վечерնյա».

Գ. Ե. Յ. Ո. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.  
Ղիմու. — Զի կարելի, Ֆեղոր Վասի-  
լեհ: Թող այժմ Մաշան մենակ երգի:  
Ֆեղեա. — Դէ, լաւ: Իսկ յետոյ «Հե  
վечерնյա». (Նորից պառկում է):

Օքիցեր. — «Չաս րոկовоյ».  
Գ. Ե. Յ. Ո. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.  
Ս. Ե. Ե. Խ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.  
Օքիցեր(երաժշտին). — Հը, գրեցիք:  
Երաժիշտ. — Զի կարելի: Ամեն անգամ

նոր բան: Եւ ինչոր սկալա է ուրիշ  
տեսակ: Այ այստեղ: (Մօտ է կան-  
չում մի գնչունու, որը նայում է):  
Այս լինչպէս պիտի երգել: (Երգում է):  
Գ. Ե. Յ. Ո. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.  
Հրաշալի է:

Ֆեղեա(վեր կենաւով). — Զի կարող  
դրել: Բայց որ դրի և օպերայի մէջ  
խոթի, — ամեն բան կը փշացնի կը թող-  
նի: Դէ, Մաշա, երգիր գոնէ «Չաս».

**Առ կիթառդ:** (Վեր է կենում, նստում  
նրա առաջ եւ նայում նրա աշքերին):

**Մաօս** (երգում է):

**Ֆեղիսա.**—Այդ էլ լաւ է: Այ да Մա-  
շա: Դէ այժմ «Հե вечерняյ».

**Աքրեմով.**—Զէ, սպասիր: Նախ իմը,  
թաղման երգը:

Օֆիցիր.—Ինչո՞ւ թաղման:

**Աքրեմով.**—Որովհետեւ, երբ որ կը մեռ-  
նեմ... Հասկանո՞ւմ ես, երբ որ կը մեռնեմ,  
դագաղի մէջ կը լինիմ պառկած, կը գան-  
գնչուները... Հասկանո՞ւմ ես: Այսպէս  
կը կտակեմ կնոջս: Ու հէնց որ կերպեն  
„Շել մէ վέրստա“, իսկոյն գուրու կը  
թոչեմ դագաղիցս, —Հասկանո՞ւմ ես:  
(Երաժշտին): Այ ինչ գրիր: Դէ, եր-  
գեցէք:

(Գնչուները երգում են),

**Աքրեմով.**—Հ'ը, հնց էր: Դէ, „Раз-  
МОЛОДЧИКИ МОЙ“.

(Գնչուները երգում են):

**Աքրեմով** (անպատշաճ քան է ա-  
նում): Գնչուները ժպտում են եւ  
շարունակում երգել, ծափ են տալիս):

**Աքրեմով** (նստում է):

(Երգը վերջանում է):

**Գնչուներ.**—Այ да Միխայիլ Անդ-  
րէևիչ, իսկական գնչու:

**Ֆեղիսա.**— Դէ, այժմ—«Հե вечер-  
նյայ».

(Գնչուները երգում են):

**Ֆեղիսա.**—Այ երգ: Այ երգ: Զարմանա-  
լի է: Եւ որտեղ է լինում այն, ինչ որ  
արտայայտուած է այստեղ: Ախ, լաւ է:  
Եւ ինչո՞ւ մարդ կարող է հասնել այս-  
պիսի խանդավառութեան, իսկ շարու-  
նակել այդ խանդավառութիւնը չի  
կարելի:

**Երաժիշտ** (զրում է).— Այս, շատ  
ինքնուրոյն երգ է:

**Ֆեղիսա.**— Ոչ թէ ինքնուրոյն, այլ  
այս է իսկականը:

**Աքրեմով.**— Դէ... Դուք հանգիստ ա-  
ռէք: (Առնում է կիթառը եւ նստում  
կատեայի մօտ):

**Երաժիշտ**.—Իսկապէս հասարակ բան  
է, միայն չափն է:

**Ֆեղիսա** (Ժափահարում է ծեղը,  
մօտենում է Մաշային եւ նստում  
գահաստրակի վրայ նրա կողքին).—  
Ախ, Մաշա, Մաշա, ինչպէս դու ամ-  
բողջ նեքինս տակնուվրայ ես անում:

**Մաօս.**—Իսկ ես ի՞նչ էի խնդրել ձեղ-  
նից:

**Ֆեղիսա.**—Ի՞նչ: Փ՞զ: (Հանում է անդ-  
րավարտիկի զրպանից): Դէ ինչ, առ:

**Մաօս** (ծիծաղում է, առնում  
փողը եւ պահում ծոցում):

**Ֆեղիսա** (գնչուներին).— Դէ արի ու  
բան հասկացի այստեղ: Ինձ համար  
երկինք է բաց անում, իսկ ինքը փող  
է խնդրում: Ախր գու ոչինչ չես հաս-  
կանում, թէ ի՞նչ ես անում:

**Մաօս.**—Ի՞նչպէս չեմ հասկանում:  
Ես հասկանում եմ, որ ում սիրում եմ,  
նրա համար էլ աշխատում եմ և լաւ  
եմ երգում:

**Ֆեղիսա.**—Ինձ սիրելու ես:

**Մաօս.**—Երկի թէ սիրում եմ:

**Ֆեղիսա.**— Զարմանալի՞ է: (Համբու-  
րում է նրան):

Տ Ե Ս Ի Լ Ա.

Գնչուները, գնչուները դուս են  
զնում: Մնում են զոյզեր՝ Ֆեղիսան  
Մաօսի հետ, Աքրեմովը Կատեայի հետ,  
օֆիցիեր Պատայի հետ: Երաժիշտը զրում  
է: Մի գնչու կիթառի վրայ վալս է  
նուազում:

**Ֆեղիսա.**— Զէ որ ես ամուսնացած  
եմ: Իսկ խումբը քեզ թոյլ չի տալիս:

**Մաօս.**—Խումբը լաւ բան է, իսկ  
սրաի բանն էլ ուրիշ է: Ում որ սի-  
րում եմ, սիրում եմ: Իսկ զգուելին  
զգուելի էլ կը մնայ:

**Թեղեա.—Ախ, լաւ է: Ուրախ ես:**  
**Մաօա.—Իհարկէ, ուրախ եմ: Լաւ**  
**հիւրեր որ լինում են, մենք էլ ուրախ**  
**ենք լինում:**

Տ Ե Ս Ի Լ III.

**Մտնում է գիշու:**  
**Գիշու (Փեղեային).—Մի պարոն**  
**ձեզ է ուղում:**

**Թեղեա.—Ի՞նչ պարոն:**  
**Գիշու.—Զգիտեմ: Լաւ է հագնուած:**  
**Սամոյրի մուշտակով:**  
**Թեղեա.—Բարորայ: Դէ ինչ, կանչիր:**

Տ Ե Ս Ի Լ IV.

**Նոյնի, սուանց գիշուի:**  
**Աժրեմով.—Այդ ժկ է եկել քեզ մօտ**  
**այստեղ:**  
**Թեղեա.—Աստուած ոչ գիտէ: Ո՞վ**  
**ինչ գործ ունի ինձ հետ:**

Տ Ե Ս Ի Լ V.

**Նոյնի: (Մտնում է Կարենին, նայում**  
**է շորջը):**

**Թեղեա.—Ա՛, վիկտնր: Ահա թէ ում**  
**չէի սպասում: Վերարկուդ հանիր: Ո՞ր**  
**քամին է քշել քեզ այստեղ: Դէ, նստիր:**  
**Լսիր, այ, «Հե վեчерնյա»:**

**Կարենi.—Je voudrais vous parler**  
sans témoins. (Ես ուղում եմ ձեզ հետ  
սուանձին խօսել):

**Թեղեա.—Ի՞նչի մասին:**  
**Կարենi.—Je viens de chez vous.**  
Votre femme m'a chargé de cette  
lettre, et puis... (Ես ձեր տանից եմ  
գալիս: Զեր կինն ինձ յանձնեց այս  
նամակը, և ապա...):

**Թեղեա (առնում է նաևակը, կար-**  
դում է, յոնքերը կիտում, յետոյ սի-  
րալիր ժալում):—Լսիր, Կարենին.  
դու խօ գիտես ինչ է գրած այս նա-  
մակի մէջ...

**Կարենi.—Գիտեմ: Եւ ուղում եմ ա-**  
մել...

**Թեղեա.—Սպասիր, սպասիր: Դու,**  
ինչպրում եմ, մի կարծիր, թէ ես ար-  
բած եմ, և խօսքերիս, այսինքն ինձ  
ուշադրութիւն չպէտք է լարձնել: Ես  
արբած եմ, բայց այս գործում ամեն  
բան տեսնում եմ պարզ: Դէ, ի՞նչ է  
յանձնարարուած քեզ ինձ ասելու:

**Կարենi.—Ինձ յանձնարարուած է**  
գտնեմ քեզ և ասեմ, որ... նա... սպա-  
սում է քեզ: Ինչպրում է, որ ամեն բան  
մոռանաս և վերագանաս:

**Թեղեա (լսում է լուս, նայելով նրա**  
աչքերին).—Այնուամենայնիւ ես չեմ  
հասկանում, ինչո՞ւ գու...

**Կարենi.—Ելիզաւէտա Անդրէնան**  
մարդ էր ուղարկել իմ ետևից և փնդ-  
րեց ինձ...

**Թեղեա.—Այդպէս...**

**Կարենi.—Բայց ես ոչ այնքան քո**  
կնոջ կողմից, որքան իմ կողմից ինդ-  
րում եմ քեզ՝ գնանք տուն:

**Թեղեա.—Դու լաւ ես ինձնից: Ի՞նչ**  
յիմարութիւն: Ինձնից լաւ լինել  
դժուար չէ: Ես անպիտան եմ, իսկ գու  
լաւ, լաւ մարդ ես: Եւ հէնց այս պատ-  
ճառով էլ ես չեմ փոխի վճիռս: Ասենք,  
այս պատճառով էլ չէ: Այլ պարզա-  
պէս չեմ կարող և չեմ ուղում... Դէ,  
ի՞նչպէս գտել:

**Կարենi.—Գնանք այժմ ինձ մօտ: Կա-**  
սեմ, որ կը վերադառնաս, իսկ վաղը...

**Թեղեա.—Իսկ վաղն ինչ: Ես միշտ**  
ես կը լինիմ, իսկ նա—նա: (Մօտենում  
**է սեղանին եւ խմում): Լաւ է ատամդ**  
մի անգամից հանես պրծնես: Ես խօ  
ասել եմ, որ եթէ նորից խօսքիս աէրը  
**չինիմ, թողնի ինձ: Ես խօսքիս տէրը**  
**չեղայ, ու վերջացաւ:**

**Կարենi.—Քեզ համար, բայց ոչ նրա**  
համար:

**Թեղիա.** — Զարմանալի է, որ դու  
հոգում ես այն բանի համար, որ մեր  
ամուսնութիւնը չխախտուի:

**Կարեն** (ուզում է ինչոր ասել):  
Մօտենում է Մաշան):

**Թեղիա** (Կարենինի խօսքը կըտ-  
րում է). — Մէկ լսիր ինչպէս է սա եր-  
գում «Լենъ»-ը: Մաշա:

(Գնչուները նստարում են):

**Մաօս** (շշնջում է). — Ի՞նչպէս մհ-  
ծարել:

**Թեղիա** (ծիծաղում է). — Մեծա-  
րել այսպէս. Վիկտոր պարոն Միխայ-  
լովիչ:

(Գնչուները երգում են):

**Կարեն** (լսում է ամօթահար. յե-  
տոյ հարցնում է). — Ի՞նչքան տամ:

**Թեղիա.** — Դէ, տուր քսանհինդ:

**Կարեն** (տալիս է):

**Թեղիա.** — Հրաշալի՛ է: Այժմ «Լենъ».  
(Գնչուները երգում են):

**Թեղիա.** (յետ է նայում). — Փա-  
խաւ Կարենինը: Է՞հ, ջնաննամը:  
(Գնչուները ցրում են):

S Ե Ս Ի Լ. VI.

**Թեղիա** (նստում է Մաշայի  
հետ). — Գիտե՞ս ով էր:

**Մաօս.** — Ազգը լսել հմ:

**Թեղիա.** — Պատուական մարդ է: Ե-  
կել էր ինձ տուն տանելու, կնոջս մօտ:  
Կինս ինձ, այս յիմարիս, սիրում է,  
իսկ ես ահա թէ ինչ եմ անում:

**Մաօս.** — Ի՞նչ, այդ լաւ չէ: Պէտք է  
գնաք նրա մօտ: Պէտք է խղճաք նը-  
րան:

**Թեղիա.** — Կարծիւմ ես, որ պէտք է:  
Իսկ ես կարծում եմ, որ պէտք չէ:

**Մաօս.** — Յայտնի բան է, որ չես  
սիրում, պէտք էլ չէ: Թանկը միայն  
սէրն է:

**Թեղիա.** — Իսկ դու ո՞րտեղից գիտես  
այդ:

**Մաօս.** — Երկի թէ գիտեմ...

**Թեղիա.** — Դէ, համբուրի ինձ: Կա-  
վալы! Մի անգամ էլ «Լենъ», ու շա-  
բաշ:

(Գնչուները սկսում են երգել):

**Թեղիա.** — Այս, լաւ է: Միայն թէ  
չգործնես... Այդպէս էլ մեռնես...

(Վարագոյր)

## ԴԱՐՄՈՂՈՒԹԻՒՆ ॥.

### ՊԱՏԿԵՐ Յ-Ր Դ

Առաջին գործողովթիւնից յետոյ անցել է երկու շաբաթ։ Գործողովթիւնը կատարում է Լիզայի տանը։

Տ Ե Ս Ի Լ 1.

Կարենին և Աննա Պատովին նստած են սեղանատանը։ Ստօս մտնում է։  
Կարենին.—Հը։

Սաօա. —Բժիշկն ասաց, որ այժմ վըտանգ չկայ։ Միայն թէ չմրսեցնենք։

Աննա Պաւլ. —Իսկ Լիզան բոլորովին հալից ընկել է։

Ստօս. —Ասում է, որ խաբուսիկ կրուպ է թեթև տեսակի։ (Մատնանշելով կողովը)։ Ի՞նչ է այս։

Աննա Պավ.—Վիկտորն է բերել, խաղող է։

Ստօս. —Հա, Լիզան սիրում է։ Նա շատ ջղային է դարձել։

Կարենին.—Երկու գիշեր չքնել, չուտել...

Ստօս (Ժպտալով). —Ասենք դուք էլ։

Կարենին.—Իմ բանն ուրիշ է։

Տ Ե Ս Ի Լ 2.

Նոյնին. Դուքս են գալիս բժիոկ և Լիզա։

Բժիոկ (ազգուորէն). —Այդպէս, այդպէս։ Ամեն մի կէս ժամից յետոյ փոխեցէք, եթէ չի քնում։ Եթէ քնած է, մի անհանգստացնէք։ Շնչափողին քըսել հարկաւոր չէ։ Սենհակի մէջ տաքութիւնը նոյնը պահեցէք...

Լիզա. —Իսկ եթէ նորից խեղդուելիս լինի։

Բժիոկ. —Զպէտք է որ խեղդուի։ Եթէ խեղդուելիս լինի, —պուլվերիզացիա։ Եւ, բացի դրանից, փոշի, առաւտեան

յէկը և երեկոյեան միւսը։ Ես իսկոյն կըգրեմ։

Աննա Պաւլ. —Թէյ չէիք կամենալ, դոկտոր։

Բժիոկ. —Ոչ, չնորհակալ եմ, հիւանդաներս սպասում են։ (Նստում է սեղանի մօտ)։

(Սաշան բերում է թուղթ, թանաք)։

Լիզա. —Ուրեմն, հաստատ, կրուպ չէ։

Բժիոկ (Ժպտալով). —Ամենաին. (Քըրում է)։

Կարենին. (Լիզային). —Դէ, այժմ թէյ խմեցէք, կամ թէ, աւելի լաւ է, գնացէք հանգստացէք, թէ չէ՝ մէկ նայեցէք ինչ էք դառնել։

Լիզա. —Այժմ ես կենդանացայ։ Շընորհակալ եմ ձեզնից։ Այ ճշմարիտ բարեկամ։ (Սեղմում է նրա ձեռքը)։ (Սաշան զայրացած հեռանում է)։

Լիզա. —Շնորհակալ եմ, բարեկամ։ Ահա որտեղ է թանկա...»

Կարենին. —Ի՞նչ եմ արել որ։ Շնորհակալութիւն յայտնելու բան չկայ։

Լիզա. —Հապա ովկ էր, որ ամբողջ գիշերներ չէր քնում։ Ո՞վ բերեց այս հոչակաւոր բժշկին։

Կարենին. —Ես արգէն վարձատրուած եմ նրանով, որ Միկայիլն այլևս վըտանգ չի սպասնում, և, զլխաւորապէս, ձեր բարութեամբ։

Լիզա (նորից սեղմում է նրա ձեռքը եւ ծիծաղում, ցոյց տալով ձեռքին մնացած դրամը)։ —Այս բըժը ժշկի համար է։ Միայն չգիտեմ ինչպէս տամ։

Կարենին. —Դէ, ես էլ չեմ կարող։ Աննա Պաւլ. —Ի՞նչ չես կարող։

Լիզա. —Փողը բժշկին տալ։ Նա ինձ համար աւելի քան մի կեանք է ազտել, իսկ ես փող եմ տալիս։ Մի տեսակ անհաճոյ բան կայ այստեղ։

**Աննա Պատլ.**—Տուր, ես կըտամ: Ես գիտեմ ինչպէս: Վերցրու և տուր, էլի:

Թժիւկ (վեր է կենում եւ տալիս է դեղատումսը).—Այսպէս այս փոշիները պէտք է ճաշի մի գդալ եփած ջրի մէջ լաւ խառնել և (շարունակում է)...

(Կարենինը սեղանի մօտ թէյ է խմում: Առաջ են զալիս Աննա Պատլինա եւ Սաշա):

**Սաօա.**—Տեսնել չեմ կարող դրանց յարաբերութիւնները: Լիզան կարծես թէ սիրահարուած է Կարենինի վրայ:

**Աննա Պատլ.**—Ի՞նչ կայ այդտեղ զարմանալու:

**Սաօա.**—Զգուելի՞ է:

(Բժիշկը զնում է, ողջունելով ամենքին: Աննա Պալովնան զնում է նրան ճանապարհ դնելու):

S e U h I. III.

Լիզա, Կարենին, Սաօա:

Լիզա (Կարենինին).—Նա այնքան սիրելի է այժմ: Հէնց որ լաւ դպուաւ, իսկոյն սկսեց ժպտալ և խօսել: Ես կըգնամ նրա մօտ: Զեղնից հեռանալ էլ չեմ ուզում:

Կարեն.՝Բայց թէյ խմեցէք, մի քիչ բան կերէք:

Լիզա.՝Այժմ ինձ ոչինչ հարկաւոր չէ: Այնպէս լաւ եմ զգում ինձ այսքան վախերից յետոյ (հնձկլտում է):

Կարեն.՝Այ, տեսնում էք, որքան թոյլ էք:

Լիզա.՝Ես երջանիկ եմ: Ուզում էք տեսնել նրան:

Կարեն.՝Ի՞ հարկէ:

Լիզա.՝Եկէք ինձ հետ: (Դնում են):  
S e U h I. IV.

**Աննա Պատլովնա** վերադառնում է Սաօայի մօտ:

**Աննա Պատլ.**—Ի՞նչ ես քիթ ու

մռութդ հաւաքել: Այնպէս փառաւոր տուեցի, և նա էլ առաւ:

**Սաօա.**—Զգուելի՞ է: Լիզան կարենինին ներս տարաւ իր հետ մանկանց: Կարծես փեսացուն է կամ ամուսինը:

**Աննա Պատլ.**—Քեզ ինչ, Է: Ինչժե ես սլովկ-պլովկ գալիս, կամ զուցէ ինքդ էիր ուզում նրա հետ ամուսնանալ:

**Սաօա.**—Ե՞ս: Այդ գիք-դագանակի հետ: Դէ, ես ում հետ ուզում էք կամուսնանամ, բայց ոչ դրա հետ: Ամենակին մտքովս էլ չի անցել: Ես միայն զգում եմ, որ Լիզան Ֆեղեայից յետոյ կարող է այգապէս մօտենալ մի օտար մարդու:

**Աննա Պատլ.**—Ո՞րտեղից է օտար, —մանկան ընկերն է:

**Սաօա.**—Բայց իո՞ ես տեսնում եմ նրանց ժամկաներից, աչքերից, որ սիրահարուած են:

**Աննա Պատլ.**—Ի՞նչ կայ այդտեղ զարմանալու: Մարդը կարեկցութիւն է ցոյց տուել երեխայի հիւանդութեան ժամանակ, համակրել է, օգնել, և Լիզան էլ երախտագէտ է: Եւ, բացի սրանից, ինչժե Լիզան չպիտի սիրել և ամուսնայ վիկտորի հետ:

**Սաօա.**—Այդ սարսափելի բան կըլինէք, զգուելի՞ Զգուելի՞:

S e U h I. V.

Կարենին և Լիզա մտնում են: Կարենին ողջունում է լու եւ զնում:

**Սաօա** զայրացած լուրս է զնում:  
S e U h I. VI.

**Աննա Պատլովնա** և Լիզա:  
Լիզա (մօրը). — Ի՞նչ պատահել որան:

**Աննա Պատլ.**—Զգիտեմ ճշմարիտ:

(Լիզան հոգուց է հանում լուր):

(Վարագոյր)



Ամբեմով.—Դէ, ասենք, որ յայտնի էստէտ ես: Գնա տես ով է եկողը... (Դուրս է զնում):

S b U h I. IV.

Նոյնի, առանց Աֆրեմովի:

Սատիւ.—Եթէ Մաշան է, բեր նրան այստեղ, թող երգի: Ոչ, այժմ այն գնչուները չեն: Տանիշան ուրիշ էր, ախ, գրողը տանի:

Թութելիչ.—Իսկ ես կարծում եմ, որ ամեն բան նոյնն է:

Սատիւ.—Ի՞նչպէս թէ նոյնն է, երբ յիմար սոմանսներ են երգում երգերի տեղ:

Թութելիչ.—Լաւ սոմանսներ էլ կան:

Կորուկով.—Ուզմամ ես գրազ գանք, ես երգել կըտամ, և դու չես իմանայ Երդ է թէ սոմանս:

Սատիւ.—Կորուկովը միշտ գրազ է գալիս:

S b U h I. V.

Նոյնի և Ամբեմով:

Ամբեմով (մ'անում է).—Պարոններ, Մաշան չէ: Իսկ ընդունելու տեղ չկայ, բացի այստեղից: Գնանք բիւլեարդ խաղալու սենեակը: (Դուրս են զնում):

S b U h I. VI.

Մանում են Ձերեա և Սաօա:

Սաօա (շինթուած).—Ֆեղեա, ներիր ինձ, եթէ քեզ դիւր չի գալիս, բայց, ի սէր Աստուծոյ, լսիր ինձ:

(Երա ծայնը դղում է):

(Փեղեան անցուլարձ է անում սենեակում: Սաշան նստել է, նայում է նրան):

Սաօա.—Ֆեղեա, տուն դարձիր:

Ձերեա. Լսիր, Սաշա, ես քեզ շատ լաւ եմ հասկանում: Սաշա, սիրելիս, քո տեղ որ լինէի, ես էլ նոյնը կանէի, կաշխատէի մի կերպ վերադարձ-

նել անցեալը, բայց իմ տեղ որ լինէիր,—եթէ դու, զգայուն, սիրելի աղջիկ, որքան էլ տարօրինակ լինի այս ասել, իմ տեղ լինէիր,—անշուշտ նոյնը կանէիր, ինչ որ ես, այսինքն կըհասայիր, կըդոդարէիր՝ խանգարել ուրիշի կեանքը...

Սաօա.—Ի՞նչպէս թէ խանգարել: Միթէ լիզան կարող է ապրել առանց քիզ:

Ձերեա.—Ախ, սիրելի Սաշա, աղաւնեակս, կարող է, կարող է, և դեռ ես բաղդաւոր կըլինի, աւելի բաղդաւոր, քան ինձ հետ:

Սաօա.—Երբէք:

Ձերեա.—Այդ քեզ թւում է: (Պահում է իր ծեռում նրա ծեռը): Բայց բանն այդ չէ: Գլխաւորն այն է, որ ես չեմ կարող: Գիտես, համար թուղթը զէս ծալի, զէս ծալի, հարիւր անգամ ծալծլի, —չի կտրուի. բայց ծալի հարիւրմէկերորդ անգամ, մէկ էլ տեսար կտրուեց: Այսպէս էլ ես ու լիզան: Ես չափազանց ցաւում եմ, որ նայում եմ նրա աչքերին: Նոյնը և նա, հաւատան:

Սաօա.—Ոչ, ոչ:

Ձերեա.—Ասում ես ոչ, իսկ ինքու էլ գիտես, որ այս:

Սաօա.—Ես կարող եմ միայն ինձմով դատել: Ես որ նրա տեղ լինէի, և դու այն պատասխանը տայիր, ինչ որ այժմ, այդ սարսափելի կըլինէր ինձ համար:

Ձերեա.—Այս, քեզ համար... (Լոռին, երկրան էլ շինթուած են):

Սաօա (վեր է կենում).—Միթէ այս այսպէս էլ պիտի մնայ:

Ձերեա.—Երկի թէ...

Սաօա.—Ֆեղեա, վերադարձիր:

Ձերեա.—Շնորհակալ եմ, սիրելի Սաշա: Դու ինձ համար կըմնաս միշտ

իբրև մի թանկագին յիշողութիւն...  
Բայց մնաս բարեաւ, աղաւնհակաւ  
Թոյլ տուր համբուրեմ քեզ (համբու-  
րում է նրա ճակատը):

**Սաօա.** (յուզուած).—Ոչ, ես մնաս  
բարեաւ չեմ ասում, և չեմ հաւատում,  
չեմ էլ ուզում հաւատալ... Ֆեղեա...

**Ֆեղեա.**—Դէ, որ այդպէս է, լսիր:  
Միայն խօսք տուր, որ ինչ որ կասեմ  
քեզ, ոչոքի չես ասի: Խօսք ես տալի:

**Սաօա.**—Իհարկէ:

**Ֆեղեա.**—Ուրեմն լսիր, Սաշա: Ճըշ-  
մարիտ է, ես նրա ամուսինն եմ, նրա  
զաւակի հայրը, բայց ես աւելորդ եմ...  
Սպասիր, սպասիր, խօսքս մի կտրիր:  
Դու կարծում ես, ես խանդոտնում եմ:  
Ամենեին: Նախ՝ իրաւունք չունիմ,  
երկրորդ՝ առիթ չունիմ: Վիկտոր Կա-  
րսինը նրա հին բարեկամն է և իմը  
նոյնպէս: Եւ նա սիրում է Լիզային,  
Լիզան էլ նրան է սիրում:

**Սաօա.**—Ո՞չ:

**Ֆեղեա.**—Միրում է, ինչպէս կարող  
է սիրել մի ազնիւ, բարոյական կին,  
որը իրեն թոյլ չի տայ սիրել ոչոքի,  
բացի ամուսնուց: Բայց նա սիրում է  
և կըսիրի, երբ այս արգելքը (մատ-  
նանշում է իրեն) հեռացուի, և ես  
կըհեռացնեմ այս արգելքը, և նրանք  
բաղդաւոր կըլինին (ծայնը դողում է):

**Սաօա.**—Ֆեղեա, մի խօսիր այդպէս:

**Ֆեղեա.**—Դու խօ գլուխ, որ այս  
ճիշտ է, և ես ուրախ կըլինիմ, որ նը-  
րանք բաղդաւոր լինին, և սրանից ա-  
ւելի լաւ ոչինչ չեմ կարող անել... Ու  
չեմ վերադառնայ և աղաւութիւն կլ-  
տամ նրանց... այդպէս էլ ասա: Էլ մի  
խօսի, մի խօսի, և մնաս բարեաւ:  
(Համբուրում է նրա զլուխը եւ դուռը  
բաց անում նրա առաջ):

**Սաօա.**—Ֆեղեա, ես հիացած եմքեզ-  
մով:

**Ֆեղեա.**—Մնաս բարեաւ, մնաս բա-  
րեաւ... (Սաշան դուրս է զնում):

Տ Ե Ս Ի Լ. VII.

**Ֆեղեա** մ'նակ:

**Ֆեղեա.**—Այս, այս... հրաշալի է,  
գեղեցիկ...

Տ Ե Ս Ի Լ. VIII.

**Ֆեղեա** և լոմի:

**Ֆեղեա.**—Կանչեցէք պարոնին:

Տ Ե Ս Ի Լ. IX.

**Ֆեղեա** մ'նակ:

**Ֆեղեա.**—Ճշմարիտ է, ճշմարիտ է...

Տ Ե Ս Ի Լ. X.

**Մտնում է Աքրեմով:**

**Ֆեղեա.**—Գնանք:

**Աքրեմով.**—Ի՞նչպէս վերջացրիր:

**Ֆեղեա.**—Հրաշալի՛ կերպով: «Ա Յո-  
յիլած, և կլյած»: Հրաշալի՛: Ո՞ւր  
են միւսնիրը:

**Աքրեմով.**—Խաղում են այնտեղ:

**Ֆեղեա.**—Շատ լաւ, գնանք մենք էլ:

(Վարագոյլ):

## ԴՈՐԾՈՂՈՒԹՅԻՒՆ III.

### ՊԱՏԿԵՐ 5-Ր Պ

Անսա Դմիտրիենայի սունձնասահնեալը, շքեղօրէն համեստ, ին է սուվենիրներով:

### ԴՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Իշխան Սքրեգորի, 60 տարեկան էլեանտ ամուրի մարդ, սափրած դէմքով, բեխերով, հին զինուրական, պահում է իրեն մեծ արժանապատութեամբ և տիսոր: Աննա Դմիտրիենա Կարենինա (Վիլսորի մայրը), ջանձլացող 50-ամեայ գրան դամական է ֆրանսերէն բառեր: Լամեյ, Վիլսոր, Լիզու:

Տ Ե Ս Ի 1.

Աննա Դմիտրիենա նամակ է զրում:

Տ Ե Ս Ի 1. II.

Աննա Դմիտրիենա և Լամեյ:

Լամեյ.—Իշխան Սերգէյ Դմիտրինիչ:  
Աննա Դմիտր.—Դէ, ի հարկէ, ներս հրաւիրեցէք: (Յետ է դառնում և ուղղում է հայելու առաջ):

Տ Ե Ս Ի 1. III.

Խօս. Սքր. (մ'ոնելով). — J'espèr que je ne force pas la consigne (Յուսամ թէ ուժով չեմ մտնում) (համբուրում է ծնողը):

Աննա Դմիտր.—Դուք գիտէք, որ քանի առաջի հիւր էք: Խոկ այժմ, այսօր

մանաւանդ: Ստացած նամակս:

Խօս. Սքր. — Ստացայ, և ահաւասիկ իմ պատասխանը:

Աննա Դմիտր. — Ես, բարեկամս, ևս սկսում եմ բոլորովին յուսահատուել. Այսօր անձնագիրը առաջակայած է, կատարելապէս կախարդուած է, կատարելապէս կախարդուած: Ես երբէք չեմ տեսել նրա մէջ այդպիսի հաստատամութիւն, այդպիսի անխղճութիւն, սառնասրտութիւն դէպի ինձ: Նա բոլորովին փոխուել է այն օրից, երբ այդ կիսը թողեց ամուսնուն:

Խօս. Սքր. — Բայց ի՞նչ է պատահել իսկապէս: Ի՞նչ դրութեան մէջ է գործը:

Աննա Դմիտր. — Եյս գրութեան մէջ, որ անպատճառ ուզում է ամուսնանալ:

Խօս. Սքր. — Խոկ ամուսինը:

Աննա Դմիտր. — Ապահարզան է տարիս:

Խօս. Սքր. — Այդպէս համար:

Աննա Դմիտր. — Եւ նա, Վիկտորը, ճակատը դէմ է արել, և այդ բոլոր ցեխը—փաստաբաններ, յանցանքի ապացուցում: Tout ça est dégoûtant. (Եյս բոլորը զգուելի է): Եւ այս բանը յետ չի մզում նրան: Ես նրան չեմ հասկանում: Նա, որ այնքան զգայուն է, այնքան քաշուղ...

Խօս. Սքր. — Սիրում է: Ա՛խ, եթէ մարդ իսկապէս սիրում է, այն ժամանակ...

Աննա Դմիտր. — Եյս, բայց հսչու մեր ժամանակը սէրը կարող էր մաքուր սէր լինել, կեանքի ամբողջ ընթացքում տևող սէր-բարեկամութիւն: Այսպիսի սէրը ես հասկանում եմ, գնահատում եմ:

Խօս. Սքր. — Այժմ նոր սերունդն արդէն չի կարող գոհանալ իգեալական

**յարաբերութիւններով:** La possession de l'âme ne leur suffit plus. (*Միայն հոգիների վրայ իշխելը նրանց այլ ևս չի գոհացնում*), ի՞նչ արած: Բայց ի՞նչպէս պիտի վարուել նրա հետ:

**Աննա Գմիեր.**—Ո՞չ, նրա մասին մի խօսէք... Բայց այս մի ինչոր կախարդութիւն է: Նրան կարծես թէ փոխել են: Դուք խօ զիտէք—ես այն կնոջ մօտ էի: Վիկտորը այնպէս խնդրում էր ինձ: Գնացի, տանը չէր, այցետոմսս թողի: Elle m'a fait demander si je ne pourrais la recevoir. (*Նա ինձ հարցրել էր, թէ չեմ կարող արդեօք ընդունել իրեն*): Եւ այժմ (նայում է ժամացոյցին), ժամը 2-ին, ուրեմն իսկոյն, պէտք է գայ: Ես խոստացայ Վիկտորին, որ կլնդունեմ, բայց հասկանում էք գրութիւնս: Ինքս ինձ կորցրել եմ: Եւ ըստ հին սովորութեան խնդրեցի ձեզ որ գաք: Ինձ հարկաւոր է ձեր օգնութիւնը:

**Իօն. Ս.քր.**—Շնորհակալ եմ:

**Աննա Գմիեր.**—Հաւ հասկացէք ինձ. այդ կնոջ այս այցը վճռում է ամբողջ գործը,—Վիկտորի վիճակը: Ես պէտք է կամ չհամաձայնեմ. . բայց ի՞նչպէս կարող եմ:

**Իօն. Ս.քր.**—Դուք ամենեի՞ն չէք ճանաշում այդ կնոջը:

**Աննա Գմիեր.**—Երբէք չեմ տեսել: Բայց վախենում եմ նրանից: Լաւ կինը չի համաձայնի թողնել ամուսնուն և լաւ մարդուն: Զէոր կարենինը Վիկտորի ընկերն է և եղել է մեր տանը: Նա շատ սիրելի էր: Ասենք ի՞նչ տեսակ էլ որ լինի: Quels que soient les torts qu'il a eus vis-à-vis d'elle. (Ի՞նչ մեղք էլ նա գործած լինի կնոջ դէմ), չի կարելի թողնել ամուսնուն: Պէտք է տանել սեպհական խաչը: Ես մի բան չեմ հասկանում: Ի՞նչպէս կարող է Վիկ-

տորն իր համոզումներով համաձայնել ամուսնանալ բաժանուած կնոջ հետ: Բանի անգամ վերջերս ինձ մօտ տաքտաք վիճաբանել է Սպիցինի հետ, ապացուցելով, որ ապահարզանը չի համապատասխանում իսկական քրիստոնէութեանը, և այժմ ինքն է այդ բանն անում: Si elle a pu le charmer à un tel point... (Եթէ այդ կինը կարողացել է հմայել նրան այդ աստիճան...): Ես վախենում եմ այդ կնոջից: Սակայն, ես ձեզ կանչել եմ, որ լսեմ ձեզ, իսկ ամբողջ ժամանակ միայն ես եմ խօսում: Ի՞նչ էք կարծում դուք: Ասացէք: Չեր կարծիքով ի՞նչ պիտի անենք: Դուք խօսել էք Վիկտորի հետ:

**Իօն. Ս.քր.**—Ես խօսել եմ՝ նրա հետ: Եւ կարծում եմ, որ նա սիրում է այդ կնոջը, սովորել է սիրել այդպէս. այդ սէրն այդպիսի իշխանութիւն է ձեռք բերել նրա վրայ, իսկ նա դանդաղօրէն, բայց հաստատապէս ընդունող մարդ է: Մի բան, որ մտաւ նրա սիրաը, այլևս դուքս չի գայ: Եւ նա չի սիրի ոչոքի, բացի այդ կնոջից, և տանց այդ կնոջ և ուրիշ կընոջ հետ բաղաւոր լինել չի կարող:

**Աննա Գմիեր.**—Բայց Վարեա կազմացնան ի՞նչպէս կուզէր ամուսնանալ նրա հետ: Եւ ի՞նչպիսի աղջիկ, ի՞նչպէս սիրում է...

**Իօն. Ս.քր.** (ժպտալով).—C'est compter sans son hôte (իրենից անկախ պատճառները հաշուի չառնել): Այս բանն այժմ բոլորովին անիրագործելի է: Եւ ես կարծում եմ, աւելի լաւ է հնազանդուել և օգնել նրան, որ ամուսնանայ:

**Աննա Գմիեր.**—Բաժանուած կնոջ հետ, որպէսզի հանդիպի իր կնոջ ամուսնուն: Ես չեմ հասկանում, թէ ի՞նչպէս դուք կարողանում էք հան-

գիստ խօսել այդ մասին։ Միթէ մայրը կարող է ցանկալ, որ այդպիսի մի կին իր միակ որդու կինը դառնայ, և այն էլ այդպիսի մի որդու։

Թօխ. Աբր.—Ի՞նչ անենք, սիրելի բարեկամ։ Ի հարկէ, աւելի լաւ է ամուսնանալ այն աղջկայ հետ, որին դուք ճանաչում էք, սիրում էք։ Բայց քանի որ այդ չի կարելի... Եւ յետոյ, եթէ նա ամուսնանար մի դնչուհու կամ Աստուած գիտէ ում հետ... Իսկ կիզա Պրոտասովան շատ լաւ, սիրելի կին է։ Ես եղօրս աղջկանից՝ Նելլիից եմ ճանաչում նրան։ խոնարհ, բարի, սիրող և բարոյական կին է։

Ա.Յ. Գևորգ. — Բարոյական կին, որը վճռում է թողնել ամուսնուն։

Թօխ. Աբր.—Դուք անձանաչելի էք դարձել։ Դուք բարի չէք, դուք խստասիրա էք։ Նրա ամուսինը մէկն է այն մարդկանցից, որոնց մասին տառւմ են՝ ինքն է միայն իր թշնամին։ Բայց նա աւելի շատ կնոջն է թշնամի։ Նա մի թոյլ, բոլորովին ընկած, արբած մարդ է։ Նա վատնել է իր ամբողջ կարողութիւնը, կնոջ ամբողջ կարողութիւնը, — կինը երեխայ ունի... Ուշընի ի՞նչպէս էք դատապարտում մի կնոջ, որ թողել է այդպիսի մի մարդու։ Եւ այն էլ՝ կինը չէ, որ թողել է, այլ նա է թողել կնոջը։

Ա.Յ. Գևորգ. — Ա՛խ, ի՞նչպիսի ցեխ, ի՞նչպիսի ցեխ։ Եւ ես պէտք է կեղտուտուեմ այդ ցեխի մէջ։

Թօխ. Աբր.—Իսկ ձեր կրօնը։

Ա.Յ. Գևորգ. — Այո, այո, ներում, «ի՞նչպէս և մեք թողումք մերոց պարտապանաց»։ Mais c'est plus fort que moi. (Բայց այս իմ ոյժերից վեր է)։

Թօխ. Աբր.—Դէ, ի՞նչպէս ապրի այդպիսի մի մարդու հետ։ Եթէ ուրիշ մարդու սիրելիս էլ չկինէր, պէտք է

այդպէս անէր։ Երեխայի համար պէտք է անէր։ Ամուսինն ինքը խելօք և բարի մարդ է, քանի որ խորհուրդ է տալիս կնոջն այդպէս անել...

Տ Ե Ս Ի Լ. IV.

Ա.Յ. Գևորգի հետ, իսկ Աբրեղկով մտնում է Ավետ (համբարում է մօք ծեռքը, բարիում է իշխան։ Աբրեղկովին)

Ա.Յ. Գևորգ. — Մամա, ես եկայ տսելու ձեզ, որ Ելիզավետա Անդրէնան իսկոյն կըդայ, և ես խնդրում եմ, աղաչում եմ ձեզ մի բան միայն։ Եթէ դուք շարունակում էք անհամաձայնութեան մասին, որ ես ամուսնանամ...»

Ա.Յ. Գևորգ. (ընդհատելով նրան). — Ի հարկէ, շարունակում եմ անհամաձայն մնալ։

Ա.Յ. Գևորգ. (շարունակելով խօսքը եւ յոնքերը կիտելով). — ...ապա խնդրում եմ, աղաչում եմ ձեզ մի բան, մի խօսէք ձեր անհամաձայնութեան մասին, բացասական վճիռ մի տաք։

Ա.Յ. Գևորգ. — Ես կարծում եմ, որ այդպիսի ոչ մի բանի մասին չենք էլ խօսելու։ Ես, զոնէ, ինքս չեմ սկըսի երբէք։

Ա.Յ. Գևորգ. — Նա ինքը առաւել ես։ Ես կըկամ մենայի միայն, որ դուք ճանաչէիք նրան։

Ա.Յ. Գևորգ. — Զեմ հասկանում մի բան։ Կենդանի ամուսին ունեցող տիկին Պրոտասովայի հետ ամուսնանու ցանկութիւնդ ի՞նչպէս ես հաշտեցնում կրօնական այն համոզումներիդ հետ, որ ապահարզանը հակառակ է քրիստոնէութեան։

Ա.Յ. Գևորգ. — Մամա, այդ անզթութիւն է ձեր կողմից։ Միթէ մենք ամենքս այնքան անսխալական ենք, որ չենք կարող հակառակ գնալ մեր համոզումներին, երբ կեանքն այսքան բարդ է։

Մամա, ինչու դուք այդպէս անգութ  
էք դէպի ինձ:

Աննա Թմիեր. — Ես սիրում եմ քեզ  
ուղում եմ, որ բաղդաւոր լինիս:

Ակա. (Աբրեգկովին). — Սերգէյ  
Դմիտրիկիչ:

Իօն. Սբր. — Ի հարկէ, դուք սրան  
բաղդաւորութիւն էք ցանկանում, բայց  
մենք մեր ծեր հասակում արդէն դժ-  
ւարութեամբ պիտի հասկանանք երի-  
տասարդութեանը: Մանաւանդ դժուա-  
րութեամբ պիտի հասկանայ մայրը,  
որ սովորել է մտածել որդու բաղդա-  
ւորութեան մասին: Բոլոր կանայք  
այդպէս են:

Աննա Թմիեր. — Այս, այս, ես էլ  
հէնց այդ եմ ասում: Ամենքն էլ ինձ  
դէմ են: Ի հարկէ, դու կարող ես ա-  
նել այդ, նու ետե մայր... (դուք  
չափահաս էք...) Բայց դու կըկործա-  
նես ինձ:

Ակա. — Զեմ հասկանում ձեզ: Այդ  
անգիտութիւնից էլ վատ է:

Իօն. Սբր. (Վիկտորին). — Բա-  
ւական է, Վիկտոր: Մաման միշտ ա-  
ռելի վատ է խօսում, քան դործում է:

Աննա Թմիեր. — Ես կասիմ, ինչ որ  
մտածում ե զգում եմ, և կասիմ, ա-  
ռանց վիրաւորելու նրան:

Իօն. Սբր. — Անշուշտ այդպէս էլ  
կըկինի:

Տ Ե Ս Ի Լ. V.

Աննա Թմիերիեւնա, իօն. Սբրեզկով  
Վիկտոր եւ Լաֆէյ (Մտնում է):

Իօն. Սբր. — Ահա եկաւ:

Վիկտոր. — Ես կըգնամ:

Լաֆէյ. — Ելիզաւէտա Անդրէնա  
Պրոտասովա:

Վիկտոր. — Ես գնում եմ: Մամա,  
ինդրում եմ: (Դուրս է գնում):

Իօն. Սբր. (Անջնպէս վեր է կե-  
նում):

Աննա Թմիեր. — Ներս հրաւիրեցէք:  
(Հշիս. Աբրեգկովին): Ոչ, դուք մնացէք:

Տ Ե Ս Ի Լ. VI.

Աննա Թմիերիեւնա եւ իօն. Սբրեզկով:  
Իօն. Սբր. — Ես կարծում էի, ձեզ  
համար աւելի լաւ է ու տեղ-ա-տեղ:

Աննա Թմիեր. — Ոչ, ես վախճնում եմ  
(այս ու այն կողմն է ընկնում): Եթէ  
ես կամինամ նրա հետ տեղ-ա-տեղ  
մնալ, ձեզ գլխով նշան կըտամ: Չա  
ճըպերա... (Այդ բանը կախուած է...)  
Այլապէս նրա հետ որ մենակ մնամ,  
կըկաշկանդուեմ: Այն ժամանակ ես  
այսպէս կանեմ ձեզ (ցոյց է տալիս  
նշանացի):

Իօն. Սբր. — Ես կըհասկանամ: Ես  
հուատացած եմ, որ նա դիւր կըգայ  
ձեզ: Միայն արդարամիտ եղէք:

Աննա Թմիեր. — Ի՞նչպէս դուք ա-  
մենքդ էլ դէմ էք ինձ:

Տ Ե Ս Ի Լ. VII.

Աննա Թմիերիեւնա, իօն. Սբրեզկով:  
Մտնում է Լիզա, զլխարկով, այցի  
հագուստով:

Աննա Թմիեր. (Պողի կանգնելով).  
— Ես ցաւում էի, որ ձեզ տանը չգտայ,  
բայց ահա դուք այնքան բարի էք, որ  
ինքներդ էք եկել:

Լիզա. — Ես ամենսկին չէի սպասում:  
Ես այնքան չնորհակալ եմ ձեզնից, որ  
դուք կամեցել էք ինձ տեսնել:

Աննա Թմիեր. — Դուք ծանծթ էք:  
(Մատնանշելով իշխ. Աբրեգկովին):

Իօն. Սբր. — Ի՞նչպէս չէ, ես պատիւ  
եմ ունեցել ներկայացուած լինելու  
(Shake hands—ձեռքերի բարեհամ  
շարժում): (Նստում են): Եղբօրս աղ-  
ջիկը՝ նելլին յաճախ խօսում է ձեր  
մասին:

Լիզա. — Այսո, մենք շատ բարեկամ  
էինք իրար: (Բաշուելով նայում է

Աննա Դմիտրիենային): Այժմ էլ  
բարեկամ ենք: (Աննա Դմիտրիենա-  
յին): Ես ամենեին չէի սպասում, թէ  
դուք կըկամենայիք տեսնել ինձ:

Աննա Պմիտր.—Ես լաւ էի ճա-  
նաշում ձեր ամուսնուն: Նա բարեկամ  
էր Վիկտորի հետ և լինում էր մեզ  
մօտ Տամբով տեղափոխուելուց առաջ:  
Կարծեօք այնտեղ էր, որ ամուսնացաւ  
ձեզ հետ:

Լիգա.—Այո, մինք այնտեղ ամուս-  
նացանք:

Աննա Պմիտր.—Իսկ յետոյ, երբ  
նորից տեղափոխուեց Մոսկուա,  
այլև չէր գալիս մեր տուն:

Լիգա.—Այո, նա զրեթէ ոչ մի  
տեղ չէր գնում:

Աննա Պմիտր.—Եւ չի ծանօթացրել  
ինձ ձեզ հետ: (Այսարմար լուսթին):

Խօս. Արք.—Վերջին անգամ ես  
հանդիպեցի ձեզ Դենիսովիների տանն  
եղած ներկայացման ժամանակ: Շատ  
լաւ էր: Դուք էլ էիք խաղում:

Լիգա.—Ոչ... այո... ինչպէս չէ...  
յիշում եմ: Ես խաղում էի: (Սորից  
լուսթին): Աննա Դմիտրիենա, նե-  
րեցէք ինձ, եթէ ձեզ համար անհաճոյ  
լինի այն, ինչ որ կասիմ, բայց ես  
չեմ կարող կեղծել: Ես եկել եմ նրա  
համար, որ Վիկտոր Միխայլովիչն ա-  
սաց, թէ... եկել եմ նրա համար, որ  
նա... այսինքն որ դուք ուղում էք ե-  
ղել ինձ տեսնել... Բայց աւելի լաւ  
է, ամեն բան ասեմ... (Հեծկլուում է):  
Շատ ծանր է ինձ համար... իսկ դուք  
բարի էք:

Խօս. Արք.—Աւելի յաւ է, ես գնամ:

Աննա Պմիտր.—Այո, գնացէք:

Խօս. Արք.—Ցտեսութիւն: (Ողջու-  
նում՝ է երկու կանաց էլ եւ դուքս է  
գնում):

Տ Ե Ս Ի Լ VIII.

Աննա Պմիտրիւնա եւ Լիգա:  
Աննա Պմիտր.—Լսեցէք, Լիգա... չգի-  
տեմ, չեմ էլ ուղում իմանալ, ինչպէս  
է ձեր հայրանունը:

Լիգա.—Անդրէնա:

Աննա Պմիտր.—Միկոյն է,—Լիգա:  
Ես խզնում եմ ձեզ. դուք դիւր էք գա-  
լիս ինձ: Բայց ես սիրում եմ Վիկտո-  
րին: Նա միակ արարածն է աշխարհիս  
երեսին, որին սիրում եմ: Ես ճանա-  
չում եմ նրա հոգին, ինչպէս իմը: Դա  
հպարտ հոգի է: Նա հպարտ էր դեռ  
ևս եօթ տարեկան երեխայ եղած ժա-  
մանակ: Հպարտ ոչ թէ անունով, ոչ  
թէ հարստութեամբ, այլ հպարտ  
իր մաքրութեամբ, և նա պահպանում է  
այդ բարձրութիւնը: Նա մաքուր է,  
ինչպէս աղջիկ:

Լիգա.—Ես գիտեմ:

Աննա Պմիտր.—Կանանցից ոչոքի չի  
սիրել: Դուք առաջինն էք: Չեմ կարող  
ասել, թէ չեմ նախանձում ձեզ: Նա-  
խանձում եմ: Բայց մենք, մայրերս,—  
ձերը գեռես փոքր է, ձեզ համար վաղ  
է,—մինք պատրաստում ենք այդ  
բանի համար: Ես պատրաստում էք  
յանձնել նրան իր կնոջը և չնախան-  
ձել: Բայց յանձնել նոյնպիսի մաքուր  
մի պղջկայ, ինչպէս ինքն է մաքուր:

Լիգա.—Ես... միթէ ես...

Աննա Պմիտր.—Ներեցէք, ես գի-  
տեմ, որ դուք մեղաւոր չէք, բայց  
դուք ոգբաղդ էք: Ես նրան ճանաչում  
եմ: Այժմ նա պատրաստ է ամեն բան  
տանել և կըտանի ու երբէք էլ չի  
գանգատուի, բայց կըտանջուի: Նրա վի-  
րաւորուած հպարտութիւնը կըտանջուի  
և նա բաղդաւոր չի լինի:

Լիգա.—Ես մտածել եմ այդ մասին:

**Աննա Գևիտը.**—Լիզա, սիրելիս, Դուք խելօք, լաւ կին էք: Եթէ դուք սիրում էք նրան, ապա ուրեմն ուզում էք նրա բաղդաւորթիւնն աւելի, քան թէ ձերը իսկ եթէ այդպէս է, ապա ուրեմն չէիք կամենայ կապել նրան և հարկադրել, որ զղայ: Թէկ նա չի ասի, երբէք չի ասի:

**Լիզա.**—Գիտեմ, որ չի ասի: Ես մատածել եմ այդ մասին և ինքս ինձ տուել եմ այդ հարցը: Մտածել և առել եմ նրան: Բայց ես ի՞նչ կարող եմ անել, բանի որ նա ասում է, թէ չի ուզում ապրել առանց ինձ: Ես ասում էի՝ բարեկամ լինինք, բայց գնացէք ձեզ համար բաղդաւորուեցէք, մի կապէք ձեր մաքուր կեանքն եմ դժբաղզ կեանքի հետ: Չի ուզում:

**Աննա Գևիտը.**—Այո, այժմ չի ուզում:

**Լիզա.**—Յորդորեցէք նրան, որ թողնի ինձ: Իսկ ես համաձայն եմ: Ես սիրում եմ նրան ոչ թէ իմ, այլ իր բաղդաւորութեան համար: Միայն օդնեցէք ինձ, մի ատէք ինձ: Թող միասին, սիրելով, որոնենք նրա բարիքը:

**Աննա Գևիտը.**—Այո, այո, ես սիրեցի ձեզ: (Համբուրում է նրան: Լիզան լալիս է): Բայց և այնպէս, բայց և այնպէս այս սարսափելի է: Եթէ նա ձեզ սիրէր այն ժամանակ, երբ դուք դեռևս չէիք ամուսնացել...

**Լիզա.**—Նա ասում է, որ այն ժամանակ սիրեց, բայց չէր ուզում խանգարել ընկերոջ բաղդաւորութիւնը:

**Աննա Գևիտը.**—Ա'լի, ինչքան ծանր է այս ամենը: Բայց և այնպէս սիրենք միմեանց, և Աստուած կօգնի մեզ գտնելու այն, ինչ որ ուզում ենք:

Տ Ե Ս Ի Լ Խ.

**Աննա Գևիտիւննա, Լիզա և Ալիկոր:**  
**Ալիկոր (մտնելով).**—Մամա, սիրե-

լիս: Ես ամեն բան լսեցի: Ես սպասում էի այդ. դուք սիրեցիք սրան: Ես ամեն բան լաւ կըլինի:

**Լիզա.**—Ինչքան ցաւում եմ, որ դուք ամեն բան լսել էք,—ես չէի խօսի:

**Աննա Գևիտը.**— Այնուամենայնիւ ոչինչ չի վճռուած: Մի բան միայն կարող եմ ասել, որ՝ եթէ այս բոլոր ծանըը հանգամանքները չկնէին, ես ուրախ կըլինէի (համբուրում է Լիզային),

**Ալիկոր.**— Խնդրում եմ, միայն մի փոխուէք:

(Վարագոյր)

## Պ Ա Տ Կ Ե Ր 6-Ր Դ

Համեստ քնակարան. անկողնակալ,  
զրասնդան, գահատրակ:

Տ Ե Ս Ի Լ. I.

**Թեղեա** մենակ: Դուռը ծեծում  
են: Դուան ետելից կանացի ծայն. «Ի՞նչ  
ես փակուել, Թօհդոք Վասիլեիչ: Ֆե-  
դեա, բաց արա»...

Տ Ե Ս Ի Լ. II.

**Թեղեա և Մաօա:**

**Թեղեա** (վեր է կենում, բաց է  
անում դուռը).— Ա'յ շնորհակալ եմ,  
որ եկար: Տխուր եմ, սարսափելի տը-  
խուր:

**Մաօա.**— Ինչու չեկար մեզ մօտ:  
ելի խմում ես: Ի՞նչ մարդ ես: ԶԵ որ  
խոստացար:

**Թեղեա.**— Գիտես, որ փող չկայ:

**Մաօա.**— Դու ինձ ասա, ինչու սի-  
րեցի քեզ:

**Թեղեա.**— Մաշ:

**Մաօա.**— Հա, ի՞նչ է, Մաշ, Մաշ:  
Որ սիրելիս լինէիր, վաղոց կըրա-  
ժանուէիր կնոջիցդ: Այնտեղ էլ էին  
ինդրում քեզ: Ասում ես, թէ չես սի-  
րում կնոջդ: Իսկ նրանից պինդ ես  
բռնել: Երեւմ է, որ չես ուզում...

**Թեղեա.**— Դու իս գիտես ինչու չեմ  
ուզում:

**Մաօա.**— Բոլորը դատարկ բան է:  
Սուտ չեն ասում, որ դու փուճ մարդ ես:

**Թեղեա.**— Դէ ի՞նչ ասեմ: Ասեմ, որ  
սիրաս ցաւում է խօսքերիցդ, այդ  
ինքդ էլ գիտես:

**Մաօա.**— Իսկի ոչինչդ էլ չի ցաւում:

**Թեղեա.**— Ինքդ էլ գիտես, որ աշ-  
խարհում մի ուրախութիւն ունիմ, —  
քո սէրը:

**Մաօա.**— Իմը կայ ու կայ: Բայց  
քոն է, որ չկայ:

**Թեղեա.**— Դէ, ի՞նչ հաւատացնեմ:  
Աւելորդ էլ է. դու ինքդ էլ գիտես:

**Մաօա.**— Ֆեղեա, ինչու ես ինձ  
աւանջում:

**Թեղեա.**— Ո՞վ ում...

**Մաօա (լալիս է).**— Լաւ մարդ չիս  
դու:

**Թեղեա (մօտենում է եւ զրկում  
նրան).**— Մաշա: Ինչու ես լալիս: Բա-  
ւական է: Ապրել պէտք է, և ոչ թէ  
լալ: Լացը քեզ չի էլ սազում: Սիրու-  
նիկդ իմ:

**Մաօա.**— Սիրում ես:

**Թեղեա.**— Բաս էլ ում պիտի սիրեմ:

**Մաօա.**— Միայն ի՞նձ: Դէ, կարդա,  
ի՞նչ ես գրել:

**Թեղեա.**— Կը ձանձրանաս:

**Մաօա.**— Թէ որ դու ես զրել, լաւ  
բան կը լինի:

**Թեղեա.**— Դէ, լսիր: (Կարդում է):  
«Ուշ աշնանը ես ու ընկերս խօսք  
տուինք հանգիպելու իրար Մուրզի-  
նեան հրապարակի մօտ: Այդ հրապա-  
րակը մի ամուր կղզի էր ուժեղ պատ-  
ճէշներով: Միգապատ, տաք, խաղաղ  
օր էր: Մշտւշը...»:

Տ Ե Ս Ի Լ. III.

**Թեղեա և Մաօա:** Դոնից մտնում  
են ծեր զնչու Խւան Մակարովիչ և պա-  
ռան զնչու Խաստան Խւանովիա, —

**Մաշայի ծնողները:**

**Խաստ. Խւան.** (Ապաննազին մօտե-

նալով աղջկան.— Այստեղ ես, անի-  
ծուած փախստական մաքի: Յարգան-  
քըս աղային: (Աղջկան): Այդ թնչ ես  
անում դու մեզ: Հօը:

Իւ. Մակար. (Փեղեային).— Լաւ չես-  
անում, աղա: Աղջկաս փչացնում ես:  
Օ՛հ, լաւ չէ, փիս բան ես անում:

Նաստ. Իւան. — Ծածկիր աղլուխդ,  
մարշ այս բոպէիս: Փախել է: Ի՞նչ  
պիտի ասեմ խմբին: Անառակութիւն  
ես անում դառ ու դատարկ մարդու  
հետ: Սրանից թնչ կարելի է վերցնել:

Մատօ. — Ես անառակութիւն չեմ  
անում: Այլ սիրում եմ աղային, և  
ուրիշ ոչինչ: Խմբից ես չեմ հեռանում,  
կերգեմ, իսկ ինչ որ...

Իւ. Մակար. — Մէկ էլ բան ասա,  
մազերդ կըքաղեմ: Անսամուս: Ո՞վ է  
այդպէս արել: Ոչ հայրդ, ոչ մայրդ,  
ոչ մօրաքոյրդ: Փիս բան ես անում,  
աղա: Մենք քեզ սիրում էինք, քանի՛  
անգամ ձրի երգել ենք, խղճացել ենք  
քեզ: Իսկ դու թնչ արիր:

Նաստ. Իւան. — Փչացըիր անմեղ տե-  
ղը մեր միս ու արիւն, մեր միակ,  
աչքի լոյս, բրիլեանտի նման, անգին  
աղջկան, աղբի հետ հաւասարեցըիր,  
այ ինչ արիր: Աստուած չունեմ:

Ֆեդեա. — Դու, Նաստասեա իւանով-  
նա, անմեղ տեղն ես ինձ վրայ կար-  
ծիք տանում: Քո աղջիկը—ոնց որ իմ  
քոյրը: Ես սրա պատիւը պահպանում  
եմ: Եւ դու ուրիշ բան մի կարծիր:  
Ես սիրում եմ սրան... Էլ թնչ անեմ:

Իւ. Մակար. — Իսկ փող որ ունէիր,  
չէ՛ք սիրում: Կըգրէիր այն ժամանակ  
խմբի օգտին տասն հազար և կառնէիր  
պատուաւոր կերպով: Իսկ հիմա փո-  
ղերդ կերել պրծել ես և թաքուն փախ-  
ցրել աղջկաս: Ամօթ է, աղա: Ամօթ է:  
Մատօ.— Զի փախցրել, ես ինքս եմ

եկել: Եւ հիմա որ տանէք, էլի կըգամ:  
Սիրում եմ, զօրով է: Զեր բոլոր կող-  
պէքներից էլ ամուր է իմ սէրը... Զեմ  
ուզում, որ չեմ ուզում:

Նաստ. Իւան. — Դէ, Մաշենկա, ջա-  
նիկս, մի փնթփնթա: Լաւ չես արել:  
Բայց թնչ անենք, արի գնանք:

Իւ. Մակար. — Դէ, բաւական է խօ-  
սէք: Մարշ: (Բոնում է Մաշայի ծնո-  
քից): Ներեցէք, աղա: (Երեքն էլ դուրս  
են զնում):

Տ Ե Ս Ի Լ Խ.

Ֆեդեա: Մանում է իշխան Արքեզիրով:

Իօն. Արք. — Ներեցէք ինձ: Ես ա-  
կամայ վկայ եղայ մի անհաճոյ տե-  
սերէյ Դմիտրիկիչ: (Բարեւում է):

Իօն. Արք. — Ո՞ւմ ճետ պատիւ ու-  
նիմ... (Ճանաչում է): Ախ, իշխան  
Սերէյ Դմիտրիկիչ: (Բարեւում է):

Իօն. Արք. — ... ակամայ վկայ ե-  
ղայ մի անհաճոյ տեսարանի: Ես կը-  
կամինայի չլսել: Բայց որ լսեցի,  
պարտքս եմ ճամարում առել, որ լսեցի:  
Ինձ ուղարկեցին այստեղ, և դրան  
մօտ հարկադրուած էի սպասել այդ  
անձերի դուրս գալուն: Մանաւանդ որ  
դուան ծեծելս չէր լսում խիստ բարձր  
ձայների մէջ:

Ֆեդեա. — Այն, այն: Խնդրեմ խո-  
նարհաբար: Շնորհակալ եմ ձեզնից,  
որ այդ բանն ասացիք ինձ: Այդ ինձ  
իրաւունք է տալիս բացատրելու ձեզ  
այդ տեսարանը: Այն, ինչ որ դուք  
կը մտածէք իմ մասին, միևնույն է ինձ  
համար: Բայց ես ուզում եմ ասել ձեզ,  
որ այն յանդիմանութիւնները, որ  
դուք լսեցիք այդ աղջկայ—մի գնչու-  
հիւրզուհու հասցէին,—անարդար են:  
Այդ աղջիկը բարոյապէս նոյնքան մա-  
քուր է, որքան մի աղաւնի: Եւ նրա  
հետ իմ ունեցած յարաբերութիւնները

բարեկամական են: Եթէ, թերեւս, այդ  
յարաբերութիւնների վրայ բանաս-  
տեղծական երանգ կայ, այնուամենայ-  
նիւ այդ բանը չի ոչնչացնում այդ  
աղջկայ մաքրութիւնը—պատիւը: Ա-  
հա այս էի ուզում ասել ձեզ: Ուրեմն  
ի՞նչ էք կամենում ինձնից: Ի՞նչ ծա-  
ռայութիւն կարող եմ մատուցանել  
ձեզ:

Խօխ. Արք.— Ես, նախ...

Ձեղիս.— Ներեցէք ինձ, իշխան: Ես  
այնպիսի կացութիւն եմ ստեղծել ինձ  
համար հասարակութեան մէջ, որ ձեզ  
հետ ունեցած իմ քիչ և հին ծանօթու-  
թիւնն ինձ իրաւունք չի տալիս, որ գուք  
ինձ այցելէք, եթէ ինձ հետ գործ չու-  
նիք: Ի՞նչ է այդ գործը:

Խօխ. Արք.— Չեմ ժխտի,—գուք հաս-  
կացաք: Ես գործ ունիմ: Բայց և այն-  
պէս խնդրում եմ ձեզ հաւատացէք, որ  
ձեր կացութեան փոփոխութիւնը եր-  
բէք չի կարող ազգել դէպի ձեզ ունե-  
ցած իմ յարաբերութեան վրայ:

Ձեղիս.— Բոլորովին հաւատացած  
եմ:

Խօխ. Արք.— Գործս այն է, որ իմ  
հին բարեկամ Աննա Դմիտրիւնա Կա-  
րենինայի որդին և ինքը Աննա Դմիտ-  
րիւնան խնդրել են ինձ ուղղակի և ան-  
միջապէս իմանալ ձեզնից, թէ ինչ յա-  
րաբերութիւնների մէջ էք... Դուք  
թոյլ կըտաք ինձ տսեմ: Թէ ինչ յա-  
րաբերութիւնների մէջ էք ձեր կնոյն  
Ելիզաւէտա Անդրէնա Պրոտասովայի  
հետ:

Ձեղիս.— Իմ յարաբերութիւնները  
իմ կնոյն,—կարող եմ ասել՝ իմ նախ-  
կին կնոյն հետ բոլորովին կարուած են:  
Խօխ. Արք.— Ես այդպէս էլ հասկա-  
նում էի: Եւ դրան համար միայն յան-  
ձըն առայ այս գժուարին առաքելու-  
թիւնը:

Ձեղիս. — Կտրուած են, շտապում  
եմ ասիւ, ոչ թէ նրա, այլ իմ յանցա-  
ւորութեան կամ, աւելի ճշտը, իմ  
անվերջ յանցաւորութիւնների պատ-  
ճառով: Իսկ նա, ինչպէս որ ամենա-  
անրիծ կինն էր, այնպէս էլ մնացել է  
ամենաանբիծը:

Խօխ. Արք.— Այսպէս, ահա, Վիկտոր  
Կարենինը, մանաւանդ նրա մայրը  
խնդրեցին ինձ իմանալ ձեզնից ձեր  
մտադրութիւնները:

Ձեղիս (տարանալով).— Ի՞նչ մտա-  
դրութիւններ: Ոչ մի: Ես նրան կա-  
տարեալ ազատութիւն եմ տալիս: Այս  
քիչ է: Երբէք չեմ խանգարի նրա  
հանգստութիւնը: Ես գիտեմ, որ նա  
սիրում է Վիկտոր Կարենինին: Թոնդ  
սիրի: Վիկտորին ես համարում եմ  
խիստ ձանձրալի, բայց խիստ լաւ,  
ազնիւ մարդ, և ես կարծում եմ, որ  
կինս նրա հետ (ինչպէս այդ ասւում  
է սովորաբար) բաղդաւոր կըլինի: Եւ...  
que le bon Dieu les bénisse! (Թող Աս-  
տուած նրանց օրհնի): Այս է բոլորը:

Խօխ. Արք.— Այս, բայց մենք...

Ձեղիս (խօսքը կտրելով).— Զկար-  
ծէք, թէ ես մի մազաշափ անգամ  
խանգստութեան զգացում եմ ունեցել:  
Եթէ ես Վիկտորի մասին ասացի, որ  
նա ձանձրալի է, ապա այդ խօսքը յետ  
եմ առնում: Նա շատ լաւ, ազնիւ,  
բարոյական մարդ է, գրեթէ իմ հա-  
կապատկերը: Եւ նա սիրել է կնոջն  
մանկութիւնից: Գուցէ, կինս էլ սի-  
րում էր նրան, երբ ամուսնացաւ ինձ  
հետ: Այսպիսի բան պատահում է:  
Ամենալաւ մէրն այն է, որի մասին  
ոչինչ չգիտես: Կինս, ես կարծում եմ,  
միշտ սիրել է: Բայց, իբրև ազնիւ կին,  
նոյն իսկ իրեն չի խոստովանուել այդ:  
Բայց այս... ինչոր ստուեր կար մեր  
ընտանեկան կեանքի վրայ... Ասինք,

ինչ եմ խոստովանութիւն անում ձեզ:  
Թօխ. Արք.— Խնդրում եմ, արէք:  
Հաւատացէք, որ ձեզ մօտ գալով ես  
ուղում եմ կատարելապէս հասկանալ  
այդ յարաբերութիւնները, և ինձ հա-  
մար այդ է ամենից կարևորը: Ես հաս-  
կանում եմ ձեզ: Հասկանում եմ, որ  
այդ ստուերը, ինչպէս շատ գեղեցիկ  
ասացիք դուք, կարող էր լինել...

Թեղեա.— Եւ կար, ե, գուցէ, այդ  
պատճառով էր, որ ես չէի կարողա-  
նում զոհ մնալ ընտանեկան այն կեան-  
քից, որ կինս տալիս էր ինձ, ուստի ինչ  
որ բան էի որոնում և գայթակղում: Մա-  
կայն, ես կարծես թէ ուղում եմ ինքս  
ինձ արդարացնել: Ես, համարձակօրէն  
ասում եմ, վատ ամուսին էի, էի, ո-  
րովհետեւ այժմ գիտակցութեանս մէջ  
վազուց է, որ ամուսին չեմ: Եւ կնոջս  
բոլորովին ազատ եմ համարում: Ու-  
րիմն, ահա ձեզ իմ պատասխանը ձեր  
առաքելութեանը:

Թօխ. Արք.— Այո, բայց դուք ճա-  
նաչում էք Վիկտորի ընտանիքը և  
իրեն Վիկտորին: Նրա յարաբերու-  
թերութիւնները գէպի Ելիզաւէտա Ան-  
դրէնան միշտ ամենայարգական և  
հեռաւոր յարաբերութիւններ են եղիլ  
և այդպէս էլ մնում են: Ծանր օրերին  
նա օգնում էր Ելիզաւէտա Անդրէն-  
ային:

Թեղեա.— Այո, ես իմ անառակու-  
թեամբ նպաստում էի նրանց մերձեց-  
մանը, ինչ արած: Պէտք է որ այս-  
պէս լինէր:

Թօխ. Արք.— Դուք գիտէք նրա և  
նրա ընտանիքի խստակրօն ուղղափառ  
համոզումները: Ես այդպիսի համո-  
զումներ չունիմ: Ես աւելի լայն հա-  
յեացքով եմ նայում իրերի վրայ: Բայց  
յարգում եմ այդ համոզումները և հաս-  
կանում: Հասկանում եմ, որ նրա և

մանաւանդ մօր համար անհնարին է  
մերձենալ կնոջը առանց եկեղեցական  
պահի:

Թեղեա.— Այո, ինձ յայտնի է նրա  
բըթ... շխակութիւնը, պահպանողա-  
կանութիւնն այդ բանում: Բայց ինչ  
են ուղում նրանք: Ապարզմն: Ես վա-  
զուց ասել եմ նրանց, որ պատրաստ եմ  
տալու, բայց որ դրա համար մեղն ինձ  
վրայ պիտի առնեմ, ասել է թէ՝ պիտի  
ստեմ, այդ բանը շատ ծանր է:

Թօխ. Արք.— Ես կատարելապէս հաս-  
կանում եմ ձեզ և միենոյնը ես եմ  
կարծում: Բայց ինչ անենք: Ես կար-  
ծում եմ, որ կարելի է այսպէս անել...  
Ասենք, դուք իրաւացի էք: Այդ սար-  
սափելի է, և ես հասկանում եմ ձեզ:

Թեղեա (սեղմում է ձեռքը). —  
Շնորհակալ եմ, սիրելի իշխան, ես ձեզ  
միշտ ազնիւ, բարի մարդ եմ ճանա-  
չել: Բայց, ասացէք, ինչպէս անեմ: Ի՞նչ  
անեմ: Մտէք լիովին իմ դրու-  
թիւնը: Ես չեմ աշխատում լաւանալ:  
Ես անպիտան եմ: Բայց կան բաներ,  
որ ես չեմ կարող հանգիստ խղճով ա-  
նել: Չեմ կարող հանգիստ կերպով  
ստել:

Թօխ. Արք.— Ես ձեզ նոյնպէս չեմ  
հասկանում: Դուք, որ ընդունակ, խելօք  
մարդ էք, այդքան զգայուն դէպի բա-  
րին, ի՞նչպէս էք կարողանում գայ-  
թակղուել, մոռանալ այն, ինչ որ ինք-  
ներդ իսկ պահանջում էք ձեզնից:  
Ի՞նչպէս հասաք այդ բանին, ի՞նչպէս  
դուք կործանիցիք ձեր կեանքը:

Թեղեա (զապում է յուզման ար-  
տասուլները). — Տաս տարի է ահա,  
որ ես անառակ կեանք եմ վարում:  
Ես առաջին անգամն է, որ ձեզ պէս  
մի մարդ խղճաց ինձ: Ինձ խղճում  
էին ընկերներս, քէփ սիրողները, կա-  
նայք, բայց մի խոհուն, բարի մարդ,

**Թեղեա մենակ:**

**Թեղեա** (Նատած է երկար, լուս ժըպտում է).— Լաւ է, շատ լաւ է: Այդպէս էլ պէտք է, այդպէս էլ պէտք է, այդպէս էլ պէտք է: Հրաշալի:

(Վարագոյր)

որպիսին դուք էք... Շնորհակալ եմ ձեզնից: Ինչպէս հասայ ես իմ կործանմանը: Նախ՝ գինին: Գինին խօ մենակ անում բան չէ: իսկ ինչ որ անում եմ ես, միշտ զգում եմ, որ այն չեմ անում, ինչ որ պէտք է, և ամաչում եմ... Եւ միայն այն ժամանակ, երբ խմում եմ, այլ ևս ամօթ չեմ զգում: Իսկ երաժշտութիւնը,—ոչ օպերաները և թեթհովէնը, այլ գնչուները... Դա այնպիսի՞ մի կեանք է, այնպիսի՞ մի եռանդ է մանում մէջդ: Դրան աւելացրէք և սիրելի սկորակ աչքերն ու ժպիտը: Եւ որքան այս բանը ոգեսրիչ է, այնքան աւելի ամօթ է զգում մարդ յետոյ:

**Թօխ. Արք.**—Հապա աշխատմնը:

**Թեղեա.**—Փորձել եմ: Ոչ մի լաւ բան չկայ: Ամեն բանից էլ դժգոհ եմ: Դէ, ինչ եմ իմ մասին խօսում: Շնորհակալ եմ ձեզնից:

**Թօխ. Արք.**—Ուրիմն ի՞նչ ասեմ:

**Թեղեա.**—Ասացէք, որ կանեմ, ինչ որ ուզում են իրենք: Նրանք ուզում են ամուսնանալ, չէ: որ նրանց ամուսնութեանը ոչինչ արգելք չլինի, չէ:

**Թօխ. Արք.**—Ի հարկէ:

**Թեղեա.**—Կանեմ. ասացէք, որ անշուշտ կանեմ:

**Թօխ. Արք.**—Բայց ի՞նչպէս:

**Թեղեա.**—Սպասեցէք: Դէ, ասենք, երկու շաբախ: Բաւակմն է:

**Թօխ. Արք. (վեր կենալով).**— Այդպէս էլ կարմիր եմ ասել:

**Թեղեա.**—Կարող էք: Մնաք բարեաւ, իշխան. կրկին անդամ շնորհակալ եմ ձեզնից:

(Իշխան Աբրեգկովը դուրս է գնում)

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԻՆ IV

### ՊԱՏԿԵՐ 7-Ր Դ

Պանդոկում: Առանձին կարինետ:  
Սպասաւորը առաջնորդում է Ֆեղեային  
և Խւան Պետրովիչ Ալեքսանդրովին:

S b Ս Ի Լ 1.

Ֆեղեա, Խւան Պետրովիչ և սպասաւոր:  
Սպասաւոր.—Այստեղ համեցէք: Այս-  
տեղ ոչոք չի անհանգստացնի, իսկ  
թուղթը իսկոյն կըբերեմ:

Խւ. Պետր.—Պրոտամով: Ես կըմլու-  
նեմ:

Ֆեղեա (լուրջ). — Խնդրեմ, մտիր,  
բայց ես զբաղուած եմ և... Ուզում ես,  
մտիր:

Խւ. Պետր.—Դու ուզում ես պատաս-  
խանել նրանց պահանջումներին: Ես  
քեզ կասեմ ինչպէս պատասխանես: Ես  
այդպէս չէի անի: Ես միշտ շիտակն եմ  
ասում և գործում եմ վճռապէս:

Ֆեղեա (սպասաւորին). — Մի շիշ  
շամպայն: (Սպասաւորը դուրս է  
զնում):

S b Ս Ի Լ 11.

Ֆեղեա և Խւան Պետրովիչ (Փեղեան հա-  
նում է ատրճանակ եւ զնում սեղանի  
վրայ):

Ֆեղեա.—Սպասիր մի քիչ:

Խւ. Պետր.—Թէ ինչ: Որ ուզում ես  
անձնասպանութիւն գործել: Կարելի  
է: Ես քեզ հասկանում եմ: Նրանք ու-  
զում են քեզ ստորացնել, իսկ դու-  
ցոյց կըտաս, թէ ովք ես դու: Քեզ կը-  
սպանես ատրճանակով, իսկ նրանց—  
մեծահոգութեամբ: Ես հասկանում եմ,  
քեզ: Ես ամեն բան հասկանում եմ,  
որովհետեւ ես հանձար եմ:

Ֆեղեա.—Իհարկէ, իհարկէ: Միայն...  
(Մտնում է սպասաւորը, ըերելով  
թուղթ եւ թանաքաման):

S b Ս Ի Լ 111.

Ֆեղեա, Խւան Պետրովիչ և սպասաւոր:

Ֆեղեա (ծածկում է ատրճանակն  
անձնողիկով).—Բաց աըա շիշը: Արի  
խմենք: (Խմում են): (Փեղեան գրում  
է): Սպասիր մի քիչ:

Խւ. Պետր.—Քո... միծ ճանապար-  
հուրդութեան կենացը: Զէ որ ես  
բարձր եմ կանգնած այդ բանից: Ես  
չեմ բռնի ձեռքք: Թէ կեանքը, թէ  
մահը հանձարի համար միենոյն են:  
Ես մեռնում եմ կեանքի մէջ և ապ-  
րում եմ մահուան մէջ: Դու կըսպանես  
քեզ, որպէս զի նրանք, երկու մարդ,  
խղճան քեզ: Իսկ ես,—ես կըսպանեմ  
ինձ նրան համար, որ ամբողջ աշխար-  
հըն իմանայ, թէ ինչ կորցրեց ինքը:  
Ես չեմ էլ տատանուի, մտածի: Առայ  
(առնում է ատրճանակը), մէկ, —ու  
պլծաւ: Բայց գեռ ես վաղ է (դնում  
է սպանակը): Ես գրելու էլ բան  
չունիմ, նրանք իրենք պիտի հասկա-  
նան... Ա՛խ, դուք...

Ֆեղեա (զրում է).—Մի քիչ սպա-  
սիր:

Խւ. Պետր.— . . . ողորմելի մարդիկ:  
Ղժվժում են, դէս ու դէն են ընկնում:  
Եւ չեն հասկանում, —ոչինչ չեն հաս-  
կանում: Թեզ չեմ ասում: Հէնց այն-  
պէս, արտայայտում եմ մտքերս: Իսկ  
ինչ է հարկաւոր մարդկութեանը:  
Շատ քիչ բան. —գնահատել իր  
հանձարներին: Իսկ մարդիկ միշտ  
պատժել, հալածել, տանջել են նրանց...  
Ո՞չ: Ես չեմ դառնայ ձեր խաղալիքը:  
Ես կըպոկեմ դիմակը ձեր երեսից:  
Ո՞չ: Կեղծաւորներ:

Ֆեղեա (վերջացրեց զրելը, խմում

է եւ կարդում). — Հեռացիր, ի սէր  
Աստուծոյ:

Իւ. Պիեր. — Հեռանման: Դէ, մնաս  
բարեաւ: Զեռքդ չեմ բանի: Ես  
նոյնը կանեմ: Բայց գեռ վաղ է: Ես  
ուզում եմ միայն ասել քեզ...

Ֆեդեա. — Լաւ: Կասես, բայց յետոյ,  
իսկ այժմ այ ինչ արա, բարեկամ:  
ինդրում եմ, առւր այս պանդոկի տի-  
րոջը (փող է տալիս նրան) և հարցրու-  
իմ անունով նամակ ու փաթեթ չկայ:  
ինդրում եմ:

Իւ. Պիեր. — Լաւ: Ուրեմն ինձ կը-  
սպասես: Ես մի կարեօր բան էլ կա-  
սեմ քեզ: Այնպիսի բան, որ չես լսի  
ոչ միայն այս, այլև և այն աշխարհում,  
գոնէ մինչև այն ժամանակ, երբ ես  
կըգամ այնտեղ: Ուրեմն բոլորը տամ:

Ֆեդեա. — Ինչքան որ պէտք է: (Իւ.  
Պետրովիչը դուրս է գնում):

Տ Ե Ս Ի Լ. IV.

### Ֆեդեա մենակ:

Ֆեդեա (շոնչ է քաշում թեթեա-  
ցած, փակում է դրուր իւան Պետրո-  
վիչի ետեւից, վերցնում է ատրճա-  
նակը, դնում քունքին, ցնցում եւ ըզ-  
գուշօրէն իջեցնում: Մոնչում է): — Ո՞չ,  
չեմ կարող, չեմ կարող, չեմ կարող:  
(Դուրս ծնծում են): Ո՞վ է:

Մաօյի ձայնը (դուան ետեւից). — Ես  
եմ:

Ֆեդեա. — Դու մի ես: Ա՛խ, Մաշա...  
(Բաց է անում դուրը):

Տ Ե Ս Ի Լ. V.

### Ֆեդեա և Մաօյ:

Մաօյ. — Բեղ մօտ էի, Պոպովի մօտ,  
Աֆրեմովի մօտ և վերջը վլիի ընկայ,  
որ այստեղ կըլինիս: (Տեսնում է ա-  
տրճանակը): Ա՛յ թէ լաւ բան ես ա-  
նում: Ցիմալ: Աստուած է վկայ, յի-  
մար ես: Միթէ իսկապէս ուզում ես  
սպանել քեզ:

Ֆեդեա. — Զէ, չկարողացայ:

Մաօյ. — Ուրեմն ես չկամ, էլի՞: Ա-  
նաստուած: Ինձ էլ չես խղճացել: Ա՛խ,  
մեօդոր Վասիլեիչ, մեղք ես գործում,  
մեղք: Իմ սիրոյ համար...

Ֆեդեա. — Ուզում էի նրանց արձա-  
կել, խոստացել էի: Իսկ սուտ խօսել  
չեմ կարող:

Մաօյ. — Բաս Բս:

Ֆեդեա. — Դու Բնչ: Բեղ էլ կար-  
ձակէի: Միթէ լաւ է, որ ինձ հետ տանջ-  
ում ես:

Մաօյ. — Երկի թէ լաւ է: Ես չեմ  
կարող առանց քեզ ապրել:

Ֆեդեա. — Ախը Բնչ կեանք պիտի  
ունենաս ինձ հետ: Լաց կըլինէիր և  
կըշարունակէիր ապրել քեզ համար:

Մաօյ. — Իսկի էլ լաց չէի լինի: Շատ  
հարկաւոր ես, թէ չես խղճում ինձ:  
(Լալիս է):

Ֆեդեա. — Մաշա, բարեկամս, չէ որ  
ես աւելի լաւ բան էի ուզում անել:

Մաօյ. — Բեղ համար:

Ֆեդեա (Ժպտալով). — Էլ մրտեղից  
աւելի լաւ կըլինէր ինձ համար, երբ  
կըսպանէի ինձ:

Մաօյ. — Ի հարկ է, աւելի լաւ կը-  
լինէր: Լաւ, Բնչ ես ուզում: Ասա:

Ֆեդեա. — Ի՞նչպէս թէ Բնչ եմ ու-  
զում: Շատ բան եմ ուզում:

Մաօյ. — Ի՞նչ, է, Բնչ:

Ֆեդեա. — Ուզում եմ, նախ, խոս-  
տումս կատարել: Այս — մէկ, և այս  
մէկն էլ բաւական է: Սուտ խօսել և  
անել այն բոլոր գարշելի բաները, ո-  
րոնք հարկաւոր են ապահարզանի հա-  
մար, — չեմ կարող:

Մաօյ. — Ասենք, իսկապէս որ գար-  
շելի է: Ես ինքս...

Ֆեդեա. — Յետոյ պէտք է նրանց իս-  
կապէս ապատել, թէ կնոջս և թէ նը-

րան: Նըանք լաւ մարդիկ են: Ինչու  
տանջուեն: Այս երկու:

Մաօա.—Կնոջդ լաւութիւնն էլ հր-  
տիդ է, երբ որ նա թողել է քեզ:

Ֆեդեա.—Նա չի թողել, ես եմ թողել:

Մաօա.—Դէ, լաւ, լաւ: Միշա դու:  
Նա հրեշտակ է: Է՞լ ինչ:

Ֆեդեա.—Մէկ էլ այն, որ դու լաւ,  
սիրելի աղջիկ ես,—սիրում եմ քեզ, և  
թէ որ կենդանի մնացի, կըկործանեմ  
քեզ:

Մաօա.—Այդ արդէն քո գործը չէ:  
Ես ինքս գիտեմ, թէ որտեղ կըկործա-  
նուեմ:

Ֆեդեա (Հոգուց է հանում).—  
Բայց գլխաւորը, գլխաւորը... Ի՞նչ է  
իմ կեանքը: Միթէ չեմ տեսնում, որ  
կորած եմ, ոչ մի բանի պէտք չեմ: Ա-  
մենքի և ինձ համար ծանր բեռ եմ  
դարձել, ինչպէս ասում էր քո հայրը:  
Անպէտք եմ ես...

Մաօա.—Յիմարութիւններ մի գուրս  
տուր: Ես քեզանից պոկ չեմ գայ:  
Կպել պրծել եմ: Իսկ որ դու վատ  
ես ապրում, խմում ու քէֆեր ես ա-  
նում... Նրա համար, որ կենդանի մարդ  
ես, թող այդ բոլորն ու պրծիր:

Ֆեդեա.—Հեշտ ես ասում:

Մաօա.—Արա, էլի, այդպէս:

Ֆեդեա.—Այ, քեզ որ նայում եմ,  
թւում է, թէ կանեմ:

Մաօա.—Ու կանես: Ամեն բան  
կանես: (Տեսնում է նաև ակը): Այս  
ինչ էիր գրում:

Ֆեդեա.—Ինչ էի գրմամ... (Աերց-  
նում է նամակը եւ ուզում է պատ-  
ռել): Էլ հարկաւոր չէ:

Մաօա (նամակը խլում է).—Գրել  
ես, թէ սպանել ես քեզ: Հա: Ատրճա-  
նակի մասին չես գրել: Գրել ես, թէ  
սպանել ես:

Ֆեդեա.—Այս, գրել եմ, որ այլեւ  
չեմ լինի:

Մաօա.—Տներ, տուր, տուր: Կար-  
դացէլ ես զու «ՉТО ՃՎԼԱՏԵ».

Ֆեդեա.—Կարծեմ, կարդացել եմ:

Մաօա.—Զանձրալի է այդ վէպը,  
բայց մի բան շատ, շատ լաւ է: Նա,  
այդ, ի՞նչպէս է անունը, Ռախմանովը  
վեր է կենում ու ցոյց տալիս, թէ  
ինքը ջուրն է ընկել խեղդուել: Այ,  
զու էլ... Լողալ չես իմանում:

Ֆեդեա.—Զէ:

Մաօա.—Լաւ, Տներ այստեղ շորերդ:  
Բոլորը, թղթապանակդ էլ:

Ֆեդեա.—Ի՞նչպէս թէ...

Մաօա.—Մհաւ, սհաւ, սհաւ: Արի  
զնանք տուն: Այստեղ շորերդ կըփո-  
խեմ:

Ֆեդեա.—Բայց այդ խաբեբայութիւն  
կըլինի:

Մաօա.—Շատ էլ լաւ կըլինի: Գնա-  
ցել ես լողալու, շորերդ մնացել են ա-  
փին: Գրպանումդ գտել են թղթա-  
պանակդ և այս նամակը:

Ֆեդեա.—Լաւ, յետո՞յ:

Մաօա.—Յետոյ: Յետոյ կըհեռանանք  
ու կապրենք փառաւորապէս:

S Ե Ս Ի Լ VI.

Ֆեդեա. Մաօա եւ մտնում է Խւան  
Պետրովիչ:

Խւ. Պետր.—Այ քեզ բան: Իսկ ատըր-  
ճանմակը: Ես կըվերցնեմ:

Մաօա. —Վերցրնւ, վերցրնւ, իսկ  
մենք գնում ենք:

(Վարագոյր)

## ՊԱՏԿԵՐ 8-ՐԴ

Հիւրասենեակ Պրոտասովայի տանը:  
Տ Ե Ս Ի Լ.

Կարենին, Լիզա:

Կարեն.—Նա այնքան որոշակի խոստացաւ, որ հաւատացած եմ թէ կը կատարի իր խոստումը:

Լիզա.—Խլիզս տանջում է ինձ, բայց պիտի ասիմ, որ այն, ինչ որ իմացայ այդ գնչուհու մասին, բոլորվին ազատեց ինձ: Մի կարծիր, թէ այս խանդոտութիւն է: Խանդոտութիւն չէ, այլ ազատումն: Դէ, ինչպէս ասեմ ձեզ...

Կարեն.—Դարձեալ ձեզ:

Լիզա (ժաղտալով).—Քեզ: Դէ մի խանգարէք... մի խանգարիր ինձ ասելու այն, ինչ որ զգում եմ: Ինձ ամենից աւելի տանջողն այն էր, որ զգում էի, թէ սիրում եմ երկու մարդու: Իսկ այս նշանակում է, որ ես անբարոյական կին եմ:

Կարեն.—Դու անբարոյական կի՞ն:

Լիզա.—Բայց երբ իմացայ, որ նա ուրիշ կին ունի, հետեւաբար ես պէտք չեմ նրան, ազատուեցի և զգացի, որ, առանց սուտ ասած լինելու, կարող եմ ասել, որ սիրում եմ ձեզ... քեզ: Այժմ հոգիս խաղաղ է, և դրութիւնս է միայն, որ տանջում է ինձ: Այդ ապահարզանը: Այդ բոլորն այնքան անտանելլ է: Այդ սպասողութիւնը:

Կարեն.—Իսկոյն, իսկոյն կը վճռուի: Բացի այն, որ նա խոստացաւ, քարտուղարիս խնդրեցի, որ խնդրագիրը տանի նրա մօտ և չհեռանայ, մինչև որ ստորագրել տայ: Եթէ չճանաչէի

նրան, ինչպէս որ ճանաչում եմ, կը կարծէի, թէ գիտմամբ է անում:

Լիզա.—Նա: Ոչ, այդ էլ նրա թէ թուլութիւնն է և թէ ազնւութիւնը. Զի ուզում անձիշտ բան ասած լինել: Միայն իզուր նրան փող ուզարկեցիր:

Կարեն.—Զէր կարելի: Գործը կարող էր կանգ առնել:

Լիզա.—Ոչ, փողը ինչ-որ լաւ բան չէ:

Կարեն.—Դէ, նա արգէն կարող է աւելի քիչ pointilleux (բծախնդիր) լինել:

Լիզա.—Ուրքան եսասէր ենք դառնում մենք:

Կարեն.—Այն, խոստովանւում եմ: Դու ես մեղաւոր: Այնքան սպասելուց, այնքան յուսահատուելուց յետոյ այժմ ես այնքան երջանիկ եմ: Իսկ երջանկութիւնը մարդուն-եսասէր է դարձնում: Դու ես մեղաւոր:

Լիզա.—Կարծում ես, մենակ դժու ես եսասէր դարձել: Ես էլ եմ դարձել: Ես զգում եմ, որ ամբողջովին լի եմ, լողում եմ երջանկութեանս մէջ: Ամեն բան կայ, թէ Միկան ասողջացաւ, թէ քո մայրն է սիրում ինձ, թէ զու և գլխաւորը-ես, ես եմ սիրում:

Կարեն.—Հա, առանց զղալու, անդմբձ:

Լիզա.—Այն օրուանից ամեն բան յանկարծ փոխուեց իմ մէջ:

Կարեն.—Եւ նորից չի փոխուի:

Լիզա.—Երբէք: Ես մի բան եմ միայն ցանկանում, - որ քո մէջ ես բոլորովին վերջացած լինի այդ, ինչպէս իմ մէջ:

Տ Ե Ս Ի Լ Ա.

Կարեն, Լիզա: Դուրս է գալիս դայեակը երեխայի հետ: (Երեխան զընում է մօր մօտ: Մայրը վերցնում է նրան ծնկան վրայ):

Կարեն.—Ո՞րպիսի դժբաղդ մարդիկ  
ենք մենք:

Լիզա.—Ի՞նչ է որ: (Համբուրում է  
երեխային):

Կարեն.—Երբ որ ամուսնացայ, և ար-  
տասահմանից վերապառնալուց յետոյ  
իմացայ այդ ու զգացի, որ կորցրել  
եմ քեզ, ես դժբաղդ էի, և ուրախա-  
նում էի, որ իմանում էի, թէ յիշում  
ես ինձ: Այդ ինձ բաւական էր: Յե-  
տոյ, երբ բարեկամական յարաբերու-  
թիւններ հաստատեցինք իրար հետ, և  
ես զգացի, որ դու քաղցր ես վարում  
ինձ հետ և մեր բարեկամութեան մէջ  
կայ ինչ-որ՝ բարեկամութիւնից աւելի  
մեծ բանի մի փոքր կայծ, ես արդէն  
գրեթէ երջանիկ էի: Ինձ միայն տան-  
ջում էր այն բանի վախը, որ ես ալնիւ  
չեմ ֆեղեայի վերաբերմամբ: Ասենք,  
ես միշտ հաստատապէս գիտակցել եմ,  
որ բացի ամենամաքուր բարեկամու-  
թիւնից ուրիշ տեսակ յարաբերութիւն-  
ներ չեմ կարող ունենալ ընկերոջս կնոջ  
հետ,—և քեզ էլ ճանաչում էի, —այն-  
պէս որ այդ բանը չէր տանջում ինձ,  
և ես գոհ էի: Յետոյ, երբ ֆեղեան  
սկսել էր տանջել քեզ, և ես զգացի, որ  
օգնականդ եմ, և դու վախենում ես իմ  
բարեկամութիւնից, ես արդէն բոլո-  
րովին երջանիկ էի, և մէջս ինչ-որ ա-  
նորոշ մի յոյս սկսեց ծագել: Յետոյ...  
երբ նա արդէն անտանելի դարձաւ,  
դու վճռեցիր թողնել նրան, և ես ա-  
ռաջին անգամ ասացի ամեն բան, և  
դու զայտացիր, այլ արցունքն աչքե-  
րիդ հետացար ինձնից, ես արդէն կա-  
տարելապէս երջանիկ էի: Իսկ եթէ ինձ  
հարցնէին, թէ էլ ի՞նչ եմ ուզում, կա-  
սէի՞ ոչինչ: Բայց յետոյ հնարաւորու-  
թիւն հանդիսացաւ կեանքս կապելու քո-  
քիւն հանքիսացաւ կեանքս կապելու քո-

հնարաւորութիւնն սկսեց իրագործուել.  
դու ասացիր ինձ, թէ սիրում էիր և  
սիրում ես ինձ. յետոյ ասացիր ինձ,  
ինչպէս այժմ, թէ նա չկայ քեզ հա-  
մար և դու ինձ ես միայն սիրում,—  
ըստ երևոյթին, այլ ևս ի՞նչ պիտի ու-  
զէի: Բայց ոչ, այժմ, այժմ ես տանջ-  
ուում եմ անցեալիս համար, կուգէի, որ  
չինէր այդ անցեալը, այլ լինէր այն,  
ինչ որ յիշեցնում է այդ անցեալը:

Լիզա (յանդիմանօրէն): — Վիկ-  
տոր:

Կարեն.—Լիզա, ներիլ ինձ: Այս, ինչ  
որ ասում եմ, նրա համար եմ ասում,  
որ չիմ ուզում քո մասին և քեզնից  
ծածուկ միտք լինի իմ մէջ: Այս բո-  
լորն ասացի գիտմամբ նրա համար, որ  
ցոյց տամ, թէ որքան վատ մարդ եմ  
ես և որքան հասկանում եմ, որ սրա-  
նից էլ դէնը գնալ անկարելի է, որ ես  
պէտք է կոռւեմ ինձ դէմ և յաղթահա-  
րեմ ինձ: Եւ ես յաղթահարեցի: Ես սի-  
րում եմ նրան:

Լիզա.—Այդպէս էլ պէտք է: Ես ա-  
րեցի ամեն բան, ինչ որ կարող էի:  
Ե՞ս չէ, այլ սրտիս մէջ եղաւ այն ա-  
մենը, ինչ որ դու կարող էիր ցանկալ.  
Նրա միջից չքացաւ ամեն բան, բացի  
քեզնից:

Կարեն.—Ամեն բան:

Լիզա.—Ամեն, ամեն բան: Թէ չէ  
չէ ասի:

Տ Ե Ս Ի Լ III.

Կարենին, Լիզա, դայնակ երեխայի հետ  
և լամի:

Լամի: —Պարոն Վոզնիսենսկի:

Կարեն.—Ֆեղեայից պատասխան է  
բերում:

Լիզա (Կարենինին).— Կանչեցէք  
այստեղ:

Կարեն. (Վեր է կենում եւ զնում է

ղէպի դուռը). — Դէ, այս էլ պատաս-  
խանը:

S Ե Ս Ի Լ. IV.

Կարենին, Լիզա (երեխան տալիս է  
դայիհակին, Դայիհակը դուրս է գնում):  
Լիզա.—Միթէ ամեն բան պիտի  
վճռուի, Վիկտոր: (Համբուրում է  
նրան):

S Ե Ս Ի Լ. V.

Կարենին, Լիզա և Անգենենսկի  
(մտնում է):

Կարեն.—Հ'ը, Բ'նչ պատասխան բե-  
րիք:

Անգեն.—Տանը չէր:

Կարեն.—Ի՞նչպէս թէ տանը չէր:  
Խնդրագիրն էլ չի ստորագրել:

Անգեն.—Խնդրագիրը չի ստորագըր-  
ուած, այլ թողուած է մի համակ ձեր  
և Ելիզաւէտա Անդրէենայի անունով:  
(Գրաւանից հանում է մի նամակ եւ  
տալիս): Գնացի նրա բնակարտնը:  
Անգեն ճաշարանումն է: Գնացի: Այն  
ժամանակ ֆեօդոր Վասիլիկին ասաց,  
որ մի ժամից յետոյ գնամ և պատաս-  
խանը կըստանամ: Գնացի և անա...

Կարեն.—Միթէ նորից յիտաձգում  
է, խօսքը յետ է առնում: Զէ, այս  
պարզապէս լաւ չէ: Որքան նա ընկել է:

Լիզա.—Դէ, մէկ կարդա, տեսնենք  
ինչ է գրում:

Կարեն (բաց է անում նամակը):  
Անգեն.—Ես հարկաւոր չեմ ձեզ:

Կարեն.—Հ'ա, չէ, ցածրութիւն: Շնոր-  
հակալ եմ... (Կանգ է առնում, կար-  
դալով զարմացած: Վողնեսնակին  
դուրս է գնում):

S Ե Ս Ի Լ. VI.

Կարեն և Լիզա:

Լիզա.—Ի՞նչ, Բ'նչ է գրում:

Կարեն.—Այս սարսափելի է:

Լիզա (վրայ է ընկնում նամակին):

— Կարդա:

Կարեն. (կարդում է). — «Լիզա և  
Վիկտոր, դիմում եմ ձեզ երկուսիդ էլ:  
Զեմ ուզում սուտ ասել, անուանելով  
ձեզ սիրելի կամ թանկագին: Զեմ կա-  
րող զապել գառնութեան և յանդիմա-  
նութեան զգացումս: Յանդիմանում  
եմ ինքս ինձ, բայց և այնպէս  
տանջւում եմ, որ մտածում եմ ձեր  
մասին, ձեր սիրոյ մասին, ձեր բաղ-  
դաւորութեան մասին: Ամեն բան գի-  
տեմ: Գիտեմ, որ, չնայելով ամուսին  
եմ, ես մի շաբք պատահականութիւն-  
ներից ստիպուած խանգարել իմ ձեզ:  
C'est moi, qui suis l'intrus. (Ես միջան-  
կեալ եմ): Բայց և այնպէս չեմ կարո-  
ղանում զսպել ինձ, որ գառնութիւն  
ու սառնութիւն չզգամ դէպի ձեզ:  
Տեսականօրէն սիրում եմ ձեզ երկու-  
սիդ էլ, մանաւանդ Լիզային, Լիզան-  
կային, բայց իրագէս աւելի քան  
սառն եմ: Գիտեմ, որ ես արդարացի  
չեմ, և չեմ կարողանում փոխուել:

Լիզա.—Այդ Բ'նչպէս է, որ նա...

Կարեն. (շարունակելով կարդալ). —  
«Բայց գանք գործին: Ինձ երկուաց-  
նող այդ զգացումն է հէնց, որ ստի-  
պում է ինձ այլ կերպ կատարել իմ  
ցանկութիւնը, քան թէ դուք կըկամե-  
նայիք: Սուտ խօսել կեղտոտ կոմե-  
դիա խաղալ, կաշառներ տալով կոն-  
սիստորիային, — այս բոլոր ցածու-  
թիւնը անտառնելի և զգուելի է ինձ  
համար: Որքան էլ ես ցած եմ, բայց  
ցած եմ ուրիշ կողմից, իսկ այդ ցա-  
ծութեանը չեմ կարող մասնակցել,  
պարզապէս չեմ կարող: Միւս ելքը,  
որ ես եմ մտածել, ամենապարզն է.  
դուք ուզում էք ամուսնանալ, որ  
բաղդաւոր լինիք. ես խանգարում եմ  
այդ բանին, հետեաբար՝ ես պէտք է  
ոչնչանամ...

**Լիգա** (վրայ է ընկնում կարենինի  
Ճեղին). — **Վիկտոր:**

**Կարեն** (կարլում է). — «Պէտք է  
ոչնչանամ: Եւ ես ոչնչանում եմ: Եթք  
այս նամակը ստանաք, ես այլս չեմ  
լինի: P. S. Շատ ցաւում եմ, որ դուք  
ինձ փող էք ուղարկել ապահարզանի  
գործը վարելու համար: Այդ անհաճոյ  
քան է և չի սազում ձեզ: Է՞հ, ի՞նչ ա-  
նենք: Ես այնքան անգամ սխալուել  
եմ. ի՞նչ կայ, որ մի անգամ էլ դուք  
սխալուէք: Փողերը յետ եմ դարձնում:  
Իմ մտածած ելքը կարճ է, էժան և  
աւելի հաստատ: Մի բան եմ միայն  
ինդքում: — Մի նեղանաք ինձնից և  
անունս օրհնութեամբ յիշեցէք: Մի  
բան էլ, այստեղ կայ Եւգենիկ ազգա-  
նունով մի ժամագործ, չչք կարող  
արդեօք օգնել նրան և գործի կանգ-  
նեցնել: Նա թոյլ, բայց լաւ մարդ է:  
Մնաք բարեաւ: Ֆեղեա»:

**Լիգա.** — Նա սպանել է իրեն: Վայ...

**Կարեն** (զանգահարում եւ դուրս է  
վազում՝ դէպի նախասեննակ). — Յետ  
կանչեցէք պարոն Վոզնեսենսկուն:

**Լիգա.** — Ես գիտէի, ես գիտէի: Ֆե-  
ղեա, սիրելի ֆեղեա:

**Կարեն.** — Լիգա:

**Լիգա.** — Ճիշտ չէ, ճիշտ չէ, թէ ես  
չէի սիրում, չեմ սիրում նրան: Նրան  
եմ միայն սիրում: Սիրում եմ: Եւ  
նրան ես կործանեցի: Թռղ ինձ: (Մըտ-  
նում է վողնեսեննակի):

Տ Ե Ս Ի Լ Վ Ա Լ

**Կարենին, Լիգա և Վոզնեսենսկին:**

**Կարեն.** — Ախր մըտեղ է ֆեղողը Վա-  
սիլիկչը: Ի՞նչ ասացին ձեզ:

**Վոզն.** — Ասացին, որ դուրս է. եկել  
առաւօտեան, թողել է այդ նամակը և  
էլ չի վերադարձել:

**Կարեն.** — Այս պէտք է իմանալ: Լի-  
գա, ես գնում եմ:

**Լիգա.** — Ներիր ինձ, բայց ես էլ  
չեմ կարող սուտ խօսել: Թռղ ինձ  
այժմ: Գնա, իմացիր...

(Վարագոյր)

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԻՒՆ Վ ՊԱՏԿԵՐ Զ-Ր Դ

Պանդոկի կեղտուտ սենեակ։ Սեղանի մօտ նստած են թէյ եւ ողի խմողներ։ Առաջին գծի վրայ դրուած է մի փոքրիկ սեղան, որի մօտ նստած է չէնք ու շնորհից ընկած Թեղեան պատառոտուն հազրատով եւ նրա հետ Պետուկով ուշադիր, քնքոյշ մի մարդ, հոգեւորականի նման երկայն մազերով։ Երկուան էլ թիշ ու միշ իմած են։

Տ Ե Մ Ի Լ Լ.

Թեղեա եւ Պետուկով։

Պետուկով։—Հասկանում եմ, հասկանում, ԱՇ այդ իսկական սէր է։ Թետիյ։

Թեղեա։—Գիտէք ինչ կայ. եթէ այդ գգացումները երեան գային մեր շըրջանի մի աղջկայ մէջ, որ նա ամեն բան զոհէր իր սիրած մարդու համար... այն ինչ նա մի գնչուհի էր, դաստիարակուած ամբողջովին շահասիրութեան մէջ, և այդ գնչուհին սիրում թեան մէջ, և այդ գնչուհին սիրում էր մաքուր, անձնապոհ սիրով։ Տալիս էր ամեն բան, իսկ ինքը ոչինչ չէր պահանջում։ Մանաւանդ այդ հակապատկերը։

Պետու։—Մեզնում նկարչութեան մէջ այդ բանը անուանում է «վալիօր»։ ԱՇ ժամանակ միայն կարելի է կատարելապէս վառկարմիր գոյն ստանալ, երբ չորս բոլորքը կանաչ է։ Ասենք,

բանն այդ չէ։ Հասկանում եմ, հասկանում...

Թեղեա։—Յետոյ, —և այս, կարծեմ, միակ բարի վարմունքն է, որ ունեցել եմ, —ես չեմ օգտուել նրա սիրուց։ Բայց գիտէք ինչու։

Պետու։—Խղճահարութիւնից։

Թեղեա։—Օ՛հ, չէ։ Ես խղճահարութիւն չեմ ունեցել գէպի նա։ Ես միշտ հիացած եմ եղել նրանից, և երբ երգում էր, —մի, ինչպէս էր երգում և հիմա էլ, գուցէ, երգում է, —միշտ վարից վեր էի նայում նրան։ Ես նրան չկործանեցի պարզապէս այն պատճառով, որ սիրում էի։ Ճշմարիտ սիրով էի սիրում։ Եւ այժմ այս բանը լաւ, լաւ յիշողութիւն է։ (Երգում է)։

Պետու։—ԱՇ, հասկանում եմ, հասկանում։ Խղճալական բան է։

Թեղեա։—Լսեցէք ինչ եմ ասում. ես կանանցով տարուել եմ։ Մի անգամ էլ սիրահարուած էի, սիրուն կին էր. սիրահարուած էի անպիտան կերպով, շնավարի, և նա rendez-vous նշանակեց։ Զգնացի, որովհետեւ տեսայ, որ ցածութիւն կըլինէի գործած նրա ամուսնու վերաբերմամբ։ Եւ մինչև հիմայ էլ, զարմանալի է, որ յիշում եմ, ուզում եմ ուրախանալ և գովել ինձ, որ ազնիւ վարուեցի, բայց... զղում եմ, որպէս թէ մեղք լինէի գործած։ Իսկ Մաշայի վերաբերմամբ—ընդհակոռակը։ Միշտ ուրախանում եմ, ուրախանում, որ ոչնչով չեմ արատաւորել զգացումս.. Կարող եմ էլի ընկնել, բոլորսպին ընկնել, վերջին շապիկս կըծախեմ, ամբողջովին կորդնոտուեմ, կըքոստուեմ, իսկ այդ ադամանդը, ոչ, ադամանդը չէ, այլ արևի շողը, այն, կըմնայ իմ մէջ, ինձ հետ։

Պետու։—Հասկանում եմ, հասկանում։ Բայց մըտեղ է նա այժմ։

**Թեղեա.** — Զգիտեմ: Զէի էլ ուզի իւմանալ: Այս բոլորն ուրիշ կեանքից էր: Եւ չեմ ուզում խառնիլ այս կեանքի հետ: (Ետեսի սեղանի մօտ լսում է կանացի աղաղակ: Ներս են մտնում պանդոկատէրը եւ բաղաքապահ մի ոստիկան: Դուրս են տանում: Փեղեան եւ Պետուշկովը նայում են, ականջ դնում եւ լոռավ):

**Պետու.** (այն բանից յետոյ, երբ այնտեղ լուսթին տիրեց). — Այո, ձեր կեսնքը զարմանալի է:

**Թեղեա.** — Զէ, ամենահասարակը: Զէ որ մեր շրջանում, այնտեղ, ուր ծնուել եմ ես, երեք ընտրութիւն կայ, երեքը միայն. — ծառայել, փող դիզել, աւելացնել այն ապականութիւնը, որի մէջ ապրում ես: Այդ բանը զգուելի էր ինձ համար. գուցէ և չէի կարողանում այդպէս անել, բայց գլխաւորապէս զգուելի էր: Երկրորդ — «Հնչացնել այդ ապականութիւնը, սրա համար պէտք է հերոս լինել, իսկ ես հերոս չեմ: Կամ երրորդը — թմրել, խմել, քէֆ անել, երգել, — հէնց այս էլ անում էի ես: Եւ ահա այս տեղը հասայ... (լսմում է):

**Պետու.** — Լաւ, իսկ ընտանեկան կեմնքը: Ես երջանիկ կը լինէի, եթէ կին ունենայի: Ինձ կինս կործանեց: **Թեղեա.** — Ընտանեկան կեանքը: Համ կինը իդէալական կին էր: Նա հիմա էլ կենդանի է: Բայց ի՞նչ ասեմ: Զամիչ չկար: Գիտես, կվասի միջի չամիչը: Խաղ չկար մեր կեանքի մէջ, իսկ ինձ հարկաւոր էր ինքնամոռացութիւն: Իսկ առանց խաղի չես կարող ինքդ քնուանալ: Եւ ապա սկսեցի անք մոռանալ: Եւ ապա սկսեցի պիտանութիւններ անել: Իսկ դու խօգիտես, մարդկանց մենք սիրում ենք այն բարիքի համար, որ մենք ենք արել նըսաց, և չենք սիրում այն չարիքի համար, որ մենք ենք արել նը-

րանց: Իսկ ես կնոջս դէմ չարիք եմ գործել: Նա կարծես թէ սիրում էլ ինձ:

**Պետու.** — Ինչո՞ւ էք ասում կարծես թէ:

**Թեղեա.** — Նրա համար եմ ասում, որ նրա մէջ երբէք չի եղել այն, որ նա հոգուս մէջ մտնէր, ինչպէս Մաշան: Է՞ն, բանն այդ չէ: Նա յդի էր կամ երեխին ծիծ էր տալիս, իսկ ես կորչում էի և տուն էի դառնում արբած: Ի հարկէ, հէնց այս բանի համար էլ քանի գնում, այնքան քիչ էի սիրում նրան: Այս, այս: (Խանդավառում է): Ա՛յ, հէնց այս ըոսէիս մտքովս անցաւ. — հէնց նրա համար էլ սիրում եմ Մաշային, որ նրան բարիք եմ արել, և ոչ թէ չարիք: Դրա համար եմ սիրում: Իսկ կնոջս տանջում էի նրա համար, որ... և ոչ թէ չէի սիրում: Բայց ոչ, պարզապէս չէի սիրում: Խանդավում էի — այս, բայց այդ էլ անցաւ: Տ Ե Ս Ի Հ Ա.

**Թեղեա, Պետուօկով և Մրեսիեւ.**

**Մօտենում** է Արտեմիել կոկարլով, ներկած բեխերով, նորոգած հին հառաւով:

**Մրեսիեւ.** — Բարի ախորժակ (զլովս է տալիս Փեղեային): Ծանօթացել էք արտիստի, նկարչի հետ:

**Թեղեա (սառն).** — Այո, մենք ծանօթ ենք:

**Մրեսիեւ (Պետուշկովին).** — Հը, պատկերը վերջացրիք:

**Պետ.** — Զէ, գլուխ չեկաւ:

**Մրե.** (Լսում է). — Ես ձեզ չեմ խանգարում:

(Փեղեան եւ Պետուշկովը լոռմ են):

**Պետ.** — Ցեօդոր Վասիլիկչը պատմում էր իր կեանքից:

**Մրե.** — Գաղտնիքներ: Ուրեմն չխան-

գարեմ ձեզ, շարունակեցէք: Շստ էլ  
պէտքս չէք: Խոզէր: (Հեռանում է դէ-  
պի հարեւան սեղանը եւ գարեջուր է  
պահանջում: Ամբողջ ժամանակ ա-  
կանջ է դնում Ֆեղեայի եւ Պետուշ-  
կովի խօսակցութեանը, թերուելով  
նրանց կողմը):

Թեղեա.—Զեմ սիրում այդ պարոնին:  
Պետ. —Նեղացաւ:

Թեղեա.—Է՛ճ, Աստուած նրա հետ:  
Զեմ կարող: Հէնց որ այդպիսի մարդ  
է գալիս նստում մօսս, ել խօսել չեմ  
կարողանում: Այ, ձեզ հետ հաճու-  
թեամբ կը նստեմ զըոյց կանհմ: Հա,  
ինչ էի ասում:

Պետ. —Ասում էիք, որ խանդոտում  
էիք: Բայց ինչպէս եղաւ, որ բաժա-  
նուեցիք ձեր կնոջից,

Թեղեա.—Ա՛խ: (Մտախոհութեան  
մէջ է լնկնում): Այս զարմանալի պատ-  
մութիւն է: Կիսս ամուսնացած է...

Պետ.—Այդ ինչպէս: Ապահարզմն:

Թեղեա.—Ոչ: (Ժպտում է): Նա այ-  
րիացաւ:

Պետ. —Այսինքն, ինչպէս թէ...

Թեղեա.—Այնպէս, այրիացաւ: Զէ  
որ ես չկամ:

Պետ.—Ի՞նչպէս թէ չկար:

Թեղեա.—Չկամ, էլի: Ես դիակ իմ:  
Այս: (Արտեմիսվ թերում է, ականջ  
է դնում): Գիտէք,—ձեզ կարող եմ  
ասել: Այս վաղուցուայ բան է, և իմ  
իսկական ազգանունս էլ չգիտէք:  
Բանն այսպէս էր. երբ որ բոլորովին  
չարչարեցի կնոջս, կերայ պրծայ ամեն  
բան, ինչ որ կարող էի, և անտանելի  
դարձայ, նրան հովանաւորող դուրս  
եկաւ: Մի կարծէք, թէ որիէ կեղասոս,  
վատ բան կար,—ոչ, հէնց իմ ընկիրն  
էր և լաւ, լաւ մարդ էր, միայն ամեն  
բանում ուղղակի իմ հակապատկերը:  
Եւ որովհետեւ իմ մէջ աւելի շատ վատ,

քան լաւ բան կայ, ուստի և նա լաւ,  
շատ լաւ մարդ էր և է. ազնիւ, հաս-  
տատակամ, ժուժկալ և պարզապէս  
առաքինի: Կնոջս նա ճանաչում էր  
մանկութիւնից, սիրում էր նրան և  
յետոյ, երբ կինս ամուսնացաւ ինձ  
հետ, հաշտուեց իր վիճակի հետ: Բայց  
յետոյ, երբ ես զգուելի դարձայ, սկսե-  
ցի տանջել կնոջս, նա սկսել էր յա-  
ճախակի գալ մեր տուն: Ես ինքս էլ  
էի ուզում այդ: Եւ նրանք սիրեցին  
իրար, իսկ ես այդ ժամանակ բոլորո-  
վին խենթացել էի և ինքս թողեցի  
կնոջս: Իսկ միւս կողմից էլ Մաշան  
էր խելքահան արել ինձ: Ես ինքս ա-  
սաջարկեցի նրանց, որ ամուսնանան:  
Զէին ուզում: Բայց ես աւելի ու աւե-  
լի անտանելի էի դառնում, և բանը  
վերջացաւ նրանով՝ որ...

Պետ. —Ինչպէս միշտ...

Թեղեա.—Ոչ: Ես հաւատացած եմ  
և գիտեմ, որ նրանք մաքուր էին  
մատացել: Նա բարեպաշտ մարդ էր, ա-  
մուսնութիւնն առանց պատկի մեղք  
էր համարում: Սկսեցին ապահարզան  
պահանջել, պահանջում էին, որ հա-  
մաձայնեմ: Պէտք է յանցանքն ինձ  
վրայ առնէի: Պէտք է այդ բոլոր ստու-  
թիւնը... Եւ ես չկարողացայ: Կըհա-  
ւատաք, ես աւելի հեշտութեամբ անձ-  
նասպան կըլինէի: Քան թէ սուտ կա-  
սէի: Եւ ուզում էի արդէն վերջ տալ  
կեանքիս: Բայց մի բարի հոգի ասաց՝  
ինչնել: Եւ ամեն բան սարքեց: Հրա-  
ժեշտի նամակ ուզարկեցի, իսկ հետե-  
ւել օրը գետափին գտան իմ հագուս-  
տը և թղթապահնակը, նամակները: Լո-  
ղալ չգիտեմ:

Պետ.—Իսկ մարմինը. չգտան, չէ:

Թեղեա.—Գտան, երևակայեցէք:—  
մի շարաթ յետոյ գտել են մի ինչ-որ  
մարմին: Կնոջս կանչել են, որ տես-

Նի: Քայքայուած մարմին: Կինս նայել  
է: Նմ է: Նա է: Այդպէս էլ մնաց: Ինձ  
թաղեցին, իսկ նրանք ամուսնացան և  
ապրում են այստեղ ու բարօր վիճակի  
մէջ են, իսկ ես,—ահա ես: Ապրում  
եմ ու խմում: Երեկ անցայ նրանց  
տան մօսով: Պատուհաններից ճրագ  
էր երեսում, վարագոյրի վրայով ինչ-  
որ ստուեր անցաւ: Ու երբեմն վատ եմ  
դառնում, երբեմն էլ կարեռութիւն  
չեմ տալիս: Վատ եմ դառնում, երբ  
փող չեմ ունենում... (Խմում է):

Արտ. (Մօտենում է).—Դէ, արգէն  
ներողութիւն կանէք, լսեցի ձեր պատ-  
մութիւնը: Շատ լաւ և, որ գլխաւորն  
է, օգտակար պատմութիւն է: Դուք  
ասում էք, թէ վատ է, երբ փող չկայ:  
Դրանից էլ վատ բան չկայ: Իսկ դուք  
ձեր դրութեան մէջ միշտ փող պիտի  
ունենաք: Զէ՞ որ որ դուք դիակ էք:

Ֆեդեա.— Ներեցէք: Զեզ չէի պատ-  
մում և չիմ ուզում ձեր խորհուրդնե-  
րը:

Արտ.— Իսկ ես ուզում եմ այդ խոր-  
հուրդները տալ ձեզ: Դուք դիակ էք,  
իսկ եթէ կենդանանաք, այն ժամա-  
նակ ի՞նչ պիտի անեն նրանք,—ձեր  
ամուսինն ու այն պարոնը, որոնք  
բարօր վիճակի մէջ են: Նրանք կըրկ-  
նամուսիններ են և ամենալաւ դէպ-  
քում կտքսորուեն ոչ շատ հեռաւոր  
տեղեր: Ուրիշն ինչու դուք առանց  
փողի պիտի մնաք:

Ֆեդեա.— Կորէք, ես ձեզ ասում եմ:  
Ես ձեզ ոչինչ չասացի:

Արտ.— Ո՞չ, ասացիք: Այ, սա վկայ  
է: Ապասաւորը լսեց, որ ասացիք, թէ  
դուք դիակ էք:

Սպասաւոր.— Մենք ոչինչ չգիտենք:

Ֆեդեա.— Արիկայ:

Արտ.— Ես եմ սրիկայ: Է՞յ, գորոդո-

վօյ: Արձանագրութիւն կազմել:  
Ֆեդեա (վեր է կենում, որ գնայ:  
Արտեմիել քննում է նրան):  
(Ներս է մտնում քաղաքապահ ու-  
տիկան):  
(Վարագոյր)

## ՊԱՏԿԵՐ 10-ՐԴ

Գործողութիւնը կատարում է զիւղում, պատաստով ծածկուած դարաւանդում:

Տ Ե Ս Ի 1.

**Աննա Թմիթիենա Կարենինա,** Լիզա՝  
յղի, դայնակ՝ երեխայի հետ:

**Լիզա.** — Այժմ արդէն գալիս է կայարանից:  
Երեխայ.— Ո՞վ է գալիս:  
**Լիզա.** — Հայրիկը:  
Երեխայ.— Հայրիկը գալիս է կայա-  
րանից:

**Լիզա.** — C'est étonnant comme il l'aime, tout-à-fait comme son père. (Զարմանալի է, թէ ինչպէս սիրում է նրան, կարծես հայրը լինի):

**Աննա Թմիթուր.** — Tant mieux. Se souvient-il de son père véritable? (Աւելի լաւ, Յիշմաւմ է իր իսկական հօրը):

**Լիզա** (Հոգոց է հանում). — Զեմ յայտնում: Մտածում եմ, ինչո՞ւ վախեցնեմ: Իսկ յետոյ մտածում եմ, որ պէտք է յայտնել: Դժուք ինչ էք կար-  
ծում, մաման.

**Աննա Թմիթուր.** — Ես կարծում եմ, Լի-  
զա, որ այդ զգացմունքից է կախուած,  
և եթէ գու անձնատուր լինիս զգաց-  
մունքիդ, սիրտգ կըթելադրի քեզ թէ  
ինչ և երբ պիտի ասես: Զարմանալի  
է, թէ ինչպէս մահը հաշտեցնում է:  
Խոստովանուում եմ, կար ժամանակ, որ  
նա, Ֆեղանան, — չէ՞ որ ես նրան երե-  
խայութիւնից էի ճանաչում, — դիւր  
չէր գալիս ինձ, բայց այժմ նա աչքիս

առաջն է գալիս միայն իրըև մի սի-  
րելի պատանի, Վիկտորի ընկերը և  
այնպիսի մի ջերմեռանդ մարդ, որ  
թէև ապօրինի, թէև ոչ կրօնական  
կերպով, բայց զոհեց իր անձը նրանց  
համար, ում սիրում էր: On aura beau  
dire, l'action est belle... (Ի՞նչ էլ որ  
տահն, արածը գեղեցիկ է): Յոյս ու-  
նիմ Վիկտորը չի մոռանայ բուրդը  
բերել, իսկոյն կըհատնի բոլորը (գոր-  
ծում է):

**Լիզա.** — Ահա գալիս է: (Հույսում են  
կառքի անիմերի եւ զանգուակների  
ծայներ: Լիզան վեր է կենում եւ մօ-  
տենում է գարաւանդի ծայրին):

**Լիզա.** — Մի ինչ որ ափկին կայ հե-  
տը, գլխարկով: Մտածն է: Կարծես  
հարիւր տարի է չեմ տեսել նրան:  
(Չնում է դէպի դուռը):

Տ Ե Ս Ի 2.

**Լիզա, Աննա Թմիթուր, Կարենինա,** դա-  
յեակ երեխայի հետ: Մտնում են Կա-  
րենին և Աննա Պաւլովնա:

**Աննա Պաւլ.** (Համբուրտում է Լի-  
զայի եւ Աննա Թմիթորինայի հետ).  
— Վիկտորը հանդիպեց ինձ և բերեց:

**Աննա Թմիթուր.** — Շատ լաւ արեց:  
**Աննա Պաւլ.** — Հա, ի հարկ է: Մտա-  
ծում էի՝ էլի կըտեսնեմ թէ չէ, ու  
նորից յետածգում էի: Ահա եկայ և,  
եթէ դուրս չէք անի՝ կըմնամ մինչեւ  
երեկոյեան գնացքի կնալը:

**Կարենին.** (Համբուրտում է կնոջը,  
մօրը եւ երեխային). — Իսկ ես ինչքան  
երջանիկ եմ, — շնորհաւորեցէք ինձ: Եր-  
կու օր տանն եմ: Վաղն առանց ինձ  
ամեն բան կանեն:

**Լիզա.** — Շատ գեղեցիկ: Երկու ծրի:  
Վաղուց չէք եղել այդպիսի բան: Գլ-  
ունք անապատ: Հմա:

**Աննա Պաւլ.** — Ինչքան նման է: Ի՞նչ  
զոշաղն է: Միայն թէ բոլորը ժառան-  
գած չլինի: հօր սիրտը...

Ա. Ենա Գմիքը. — Բայց ոչ թուլու-  
թիւնը:

Լիզա. — Ամեն, ամեն բան: Վիկտո-  
րը համաձայն է ինձ հետ: Ի՞նչ կը լի-  
նէր, որ նա մանկութիւնից դաստիա-  
րակուէր...

Ա. Ենա Պատկ. — Դէ, ես ոչինչ չեմ  
հասկանում այդ բանից: Ես միայն չեմ  
կարողանում յիշել նրան առանց ար-  
տասուելու:

Լիզա. — Մենք էլ: Ո՞րքան նա բարձ-  
րացել է մեր յիշողութեան մէջ:

Ա. Ենա Պատկ. — Այս, ես կարծում եմ:

Լիզա. — Մի ժամանակ ի՞նչպէս ան-  
լուծելի էր թուում: Եւ ի՞նչպէս յան-  
կարծ ամեն բան լուծուց:

Ա. Ենա Գմիքը. — Դէ, Վիկտոր, բե-  
րի՞ր բուրդը:

Կարեն. — Բերի, բերի: (Վերցնում է  
ճամփուկը եւ մէկ-մէկ հանում է):  
Այս բուրդը, այս օգևկուն, այս էլ  
նամակներ, այս էլ ծրար պետական  
կնիքով քո անունով (տալիս է կնոջը):  
Դէ, Աննա Պատլովսա, եթէ կը կամե-  
նայիք լուացուել, համեցէք գնանք:  
Ես էլ պէտք է մաքրուեմ, թէ չէ ո՞ր-  
տեղ որ է՝ պիտի ճաշենք: Լիզա, ներ-  
քեի անկեան սենեակն ենք տալիս, չէ,  
Աննա Պատլովսային: (Լիզան, գունա-  
տուած, դողացող ծեռքերով քոնած է  
թուղթը եւ կարդում է):

Կարեն. — Ի՞նչ պատահեց քեզ, Լիզա:

Ի՞նչ է գրած այդտեղ:

Լիզա. — Նա կենդանի է: Աստուած  
իմ: Ե՞րբ պիտի ազատի ինձ: Վիկ-  
տոր: Այս ի՞նչ է: (Հեկեկում է):

Կարեն. (առնում է նամակը եւ  
կարդում). — Այս սարսափելի է:

Ա. Ենա Գմիքը. — Ի՞նչ: Դէ ասա էլի:  
Կարեն. — Այս սարսափելի է, նա  
կենդանի է: Եւ Լիզան երկու ամուսին  
ունի, ես էլ ոճքագործ եմ: Այս թուղ-

թը դատական քննչից է: Նա պահան-  
ջում է, որ Լիզան գնայ իր մօտ:

Ա. Ենա Գմիքը. — Ի՞նչ սարսափելի  
մարդ է եղել: Ինչու է արել այդ:  
Կարեն. — Բոլորը սուտ է, սուտ է:  
Լիզա. — Օ՛, որքան ատում եմ նրան:  
Չեմ իմանում ինչ հմ ասում... (Հեռա-  
նում է արտասուելով): Կարենինը  
զնում է նրա ետիցից):

Տ Ե Ս Ի Լ Ա. Ա.

Ա. Ենա Գմիքիեւնա և Ա. Ենա Պատ-  
լովսա:

Ա. Ենա Պատկ. — Բայց ի՞նչպէս է նա  
կենդանի մնացել:

Ա. Ենա Գմիքը. — Ես միայն այն գի-  
տեմ, որ հէնց որ Վիկտորը շօշափեց  
այդ ցեխը... պիտի խրէին նրան: Ու  
խրեցին: Բոլորը խաբերայութիւն է,  
բոլորը սուտ է:

(Վարագոյր)

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԻՒՆ VI

### ՊԱՏԿԵՐ 11-Ր Պ

Դատական ընկիչի սենեակ: Դատական բներքնատած է սեղանի մօտ եւ խօսում է Մելնիկովի հետ: Կողքին գործափառը թղթեր է նայում:

S Ե Ս Ի Լ. I.

Դատական բներք, Մելնիկով, գործափառ:

Դատ. Բ6.—Այդ բանը ես երբէք չեմ ասել նրան: Ինքն է հնարին, և յետոյ ինձ է յանդիմանում:

Մելն. — Զի յանդիմանում, այլ նեղացած է:

Դատ. Բ6.—Դէ, լաւ, կը գամ ճաշելու: Իսկ այժմ մի շատ հետաքրքրական գործ կայ: Ներս հրաւիրեցէք:

Գործ.—Երկուսին է՞լ:  
Դատ. Բ6. (վերջացնում է ծխելը եւ ծխախոտը թագանելով).—Ոչ, մենակ տիկ. Կարենինային կամ, աւելի ճիշտ, ըստ առաջին ամուսնու՝ Պրոտասովային:

Մելն. (զնալով).—Ա՛, այդ կարենինան է:

Դատ. Բ6.—Այս, կեղտան գործ է: Ասենք, նոր եմ սկսում քննութիւնը, բայց լաւ չէ: Դէ, ցտեսութիւն: (Մելնիկովը դուրս է զնում):

S Ե Ս Ի Լ. II.

Դատական բներք, գործափառ և Լիզա (վուալով, սեւ հազուատով, մտնում է):

Դատ. Բ6.—Խոնարհաբար խնդրում եմ (ցոյց տալով աթոռը): Հաւատացէք,

շատ ցաւում եմ, որ հարկադրուած եմ հարցումներ անելու ձեզ, բայց այդ բանն անհաժեղտ է... Խնդրեմ, հանգստացէք և իմացած եղէք, որ կարող էք չպատասխանել հարցումներիս: Միայն իմ կարծիքս այն է, որ ձեզ համար, ինչպէս և ամենքի համար, ամենից լաւը ճշմարտութիւնն է: Միշտ աւելի լաւ է և աւելի գործնական:

Լիզա.—Ես թագցնելու ոչինչ չունիմ:

Դատ. Բ6.—Այսպէս ուրեմն (նայում է թղթին): Ձեր անունը, կոչումը, գաւանութիւնը—այս բոլորը ես գրել եմ, այսպէս է:

Լիզա.—Այս:

Դատ. Բ6.—Դուք մեղադրում էք այն բանի համար, որ իմանալով, որ ձեր ամուսնուն, կենդանի է, ամուսնացել էք ուրիշի հետ:

Լիզա.—Ես չգիտէի:

Դատ. Բ6.—Եւ մէկ էլ այն բանի համար, որ դուք, փողով կաշառելով ձեր ամուսնուն, յորդորել էք նրան կեղծիք կատարել, այսինքն անձնասպանութեան պէս մի բան, որպէս զի աղատուէք նրանից:

Լիզա.—Այդ բոլոր ճիշտ չէ:

Դատ. Բ6. Այսպէս ուրեմն թոյլ տուէք մի քանի հարցումներ անեմ: Ուղարկել էք դուք նրան անցեալ տարուայ յուլիսին 1,200 սուրլի:

Լիզա.—Այդ փողը նրանն էր: Ստացուած էր նրա իրեղէնսիրը ծախելուց: Եւ այն ժամանակ, երբ ես բաժանուեցի նրանից և տպահարզան էի սպասում, այդ փողն ուղարկեցի նրան:

Դատ. Բ6.—Այդպէս, շատ լաւ: Այդ փողն ուղարկուած է յուլիսի 17-ին, այսինքն նրա անյայտանուուց երկու օր առաջ:

Լիգա.—Կարծեմ, որ յուլիսի 17-ին:  
Չեմ յիշում:

Թատ. Բ6.—Իսկ ինչն այդ միևնոյն  
ժամանակ կոնսիստորիային այլևս չէր  
ներկայացուած ապահարզանի խնդրա-  
գիրը և փաստաբանն էլ արձակուած  
էր:

Լիգա.—Զգիտեմ:

Թատ. Բ6.—Լաւ: Իսկ երբ սստիկա-  
նութիւնը հրաւիրել էր ձեզ, որ դի-  
ակը տեսնէք, այդ ի՞նչպէս է եղել,  
որ ասել էք, թէ ձեր ամուսնու  
դիւակն է:

Լիգա.—Ես այնքան յուզուած էի  
այն ժամանակ, որ չնայեցի դիակին,  
և այնպէս համոզուած էի, թէ նա է,  
որ, երբ հարցրին, պատասխանեցի,  
թէ կարծում եմ, որ նա է:

Թատ. Բ6.—Այո, դուք չէք նայել  
յուզուած լինելուց, որ շատ հասկա-  
նալի է: Լաւ: Իսկ ինչն, թոյլ տուէք  
իմանամ, դուք ամեն ամիս փող էիք  
ուղարկում Սարատով, հէնց այն քա-  
ղաքը, ուր ապրում էր ձեր առաջին  
ամուսինը:

Լիգա.—Այդ փողն ուղարկում էր  
իմ ամուսինը: Եւ ես չեմ կարող ասել  
թէ ում էր ուղարկում, որովհետեւ  
այդ իմ գաղտնիքը չէ: Միայն այդ  
փողը չէր ուղարկուում Ձեօղոր  
վասիլմիշին: Մենք հաստատ համոզ-  
ւած էինք, որ նա չկայ: Այս ես կա-  
րող եմ ձեզ հաստատապէս ասել:

Թատ. Բ6.—Շատ լաւ: Մի բան թոյլ  
տուէք նկատեմ, տիկին, որ մենք օ-  
րէնքի ծառաներն ենք, բայց այդ չի  
խանգարում մեզ, ոք մարդ լինինք:  
Եւ հաւատացէք, ես կատարելապէս  
հասկանում եմ ձեր դրութիւնը և ցա-  
ւակցում եմ ձեզ: Դուք կապուած էք  
եղել մի մարդու հետ, որ վատնում է  
եղել իր կարողութիւնը, անհաւատ-

րիմ է եղել ձեզ, մի խօսքով՝ դժբաղ-  
դացրել է...

Լիգա.—Ես սիրում էի նրան:

Թատ. Բ6.—Այո, բայց և այնպէս  
բնական է, որ դուք կամեցել էք ա-  
զատուել նրանից և ընտրել էք այդ  
աւելի հասարակ ճանապարհը, առանց  
մտածելու, որ դրանից կարող է ծագել  
այն, ինչ որ յանցագործութիւն է հա-  
մարւում, այսինքն երկամուսնու-  
թիւն,—այս ես էլ եմ հասկանում: Եւ  
երդուեալները կըհասկանան այդ: Ուս-  
տի և ձեզ խորհուրդ կրտայի, որ  
ամեն բան յայտնէք:

Լիգա.—Ես ոչինչ չունիմ յայտնե-  
լու: Ես երբէք սուս չեմ ասել: (Ղա-  
լիս է): Այլ ևս պէտք չէմ:

Թատ. Բ6.—Ես ձեզ կըխնդրէի դեռ  
ևս մնայիք այստեղ: Այլիս չեմ ան-  
հանգստացնի ձեզ հարցումներով: Մի-  
այն համեցէք կարդացէք և ստորա-  
գրեցէք: Ահաւասիկ հարցաքննութիւնը:  
Ճիշտ են արդեօք արտայայտուած  
ձեր պատասխանները: Խնդրեմ, հա-  
մեցէք այստեղ (ցոյց է տալիս պա-  
տուհանի մօտ դրուած բազկաթողը):  
(Գործավարին): Ներս հրաւիրեցէք  
այս կարենինին:

Տ Ե Ս Ի Լ 111.

Թատական Բ66իչ, գործավար, Լիգա:  
Մտնում է Կարենին խատապէմ, հան-  
դիսաւրապէս:

Թատ. Բ6.—Խոնարհաբար խնդրում եմ:  
Կարեն. — Ծնորհակալ եմ: (Կանգնած  
է): Ի՞նչ էիք կամենում:

Թատ. Բ6.—Ես պարտաւոր եմ հար-  
ցաքննել:

Կարեն. — Իրբու ի՞նչ:

Թատ. Բ6. (Ժպտալով).— Ես՝ իրբու  
դատական քննիչ, իսկ ձեզ պիտի հար-  
ցաքննեմ իրբու մեղադրեալի:

Կարեն.—Համար էմ իսկ լոնչ բանի համար եմ մեղադրւում:

Պատ. Բ6.—Ամուսնացած կնոջ համարումնանալու համար: Սակայն թոյլ տուեք կարգով հարցնեմ: Նստեցէք:

Կար.—Շնորհակալ եմ:

Պատ. Բ6.—Զեր անհենը:

Կար.—Վիշտոր կարենին:

Պատ. Բ6.—Կոչմամը:

Կար.—Կամերհեր, իսկական ստատուիլի ոռվետնիկ:

Պատ. Բ6.—Տարիքը:

Կար.—38:

Պատ. Բ6.—Դաւանութիւնը:

Կար.—Ուղղափառ, դատի և նախանձական քննութեան տակ չեմ եղել: Ուրիշ:

Պատ. Բ6.—Զեր յայտնի՞ էր արդեօք, որ ֆեօդոր Վասիլիչ Պրոտասովը կենդանի է, երբ ամուսնացաք նրա կնոջ հետ:

Կար.—Յայտնի չէր: Մենք երկուսս էլ համոզուած էինք, որ նա խեղդուել է:

Պատ. Բ6.—Ում էիք փող ուղարկում Սարատով Պրոտասովի մահուան սուտ տեղեկութիւնից յետոյ:

Կար.—Ես չեմ կամենում պատասխանել այդ հարցմունքին:

Պատ. Բ6.—Շատ լաւ: Ի՞նչ նպատակով էիք 1,200 ռ. փող ուղարկել պ. Պրոտասովին յուլիսի 17-ին նրա սուտ մահուանից առաջ:

Կար.—Այդ փողն ինձ յանձնել էր իմ կինը:

Պատ. Բ6.—Տիկին, Պրոտասովան:

Կար.—Իմ կինը՝ իր տմումնուն ուղարկելու համար: Այդ փողը կինս նըրա սեպհականութիւնն էր համարում և, նրա հետ ունեցած կապը կտրելուց յետոյ, անարդար բան էր համարում իր մօտ պահել:

Պատ. Բ6.—Այժմ մի հարցմունք ևս, ինչու դուք դադարեցրել էրք ապահարզանի գործը:

Կար.—Որովհետեւ ֆեօդոր Վասիլիկիչն ինքն էր յանձն առել այդ գործը գլուխ բերել և գրել էր ինձ այդ մասին:

Պատ. Բ6.—Զեր մօտ կմյ այդ նամակը:

Կար.—Նամակը կորած է:

Պատ. Բ6.—Ի՞նչքան տարօրինակ է, որ կորած է և բացակայում է այն ամենը, ինչ որ կարող էր արդարադատութեանը համոզել, որ ձեր ցուցանիրը ճշմարիտ են:

Կար.—Ուզում էք ուրիշ որեկ բան իմանալ:

Պատ. Բ6.—Ես ոչինչ չեմ ուզում, բացի պարտականութիւնս կատարելուց, իսկ դուք պիտի ուզէք, որ արդարանաք, և ես այս ըսպէին խորշուրդ էի տալիս տիկ: Պրոտասովային, և ձեզ էլ խորհուրդ կըտայի՝ չծածկել այն, ինչ որ ակներեւ է, այլ պատմել ամեն բան, ինչպէս որ եղել է: Մանաւանդ, որ պ. Պրոտասովը այնպիսի դրութեան մէջ է, որ յայտնել է ամեն բան այնպէս, ինչպէս որ եղել է, և, հաւանաբար, դատարանումն էլ նոյնը կասի: Ես խորհուրդ կըտայի...

Կար.—Ես կըխնդրէի ձեզ, որ մնայիք ձեր պարտականութիւնների կատարման շրջանակում, իսկ խորհուրդները թողնէիք: Կարող ենք դնալ: (Մօտենում է Լիզային. սա վեր է կենում եւ առնում է նրա ծեռքը):

Պատ. Բ6.—Շատ ցաւում եմ, որ պէտք է պահեմ ձեզ: (Կարենինան զարմանքով յետ է նայում): Օ՛, աչ, այն մտքով չեմ ասում, թէ պիտի ձերբակալեմ ձեզ: Թէկ այդ աւելի յարմար կըլինէր ճշմարտութիւնը երեան հա-

նելու համար, բայց ես այդ միջոցին չեմ դիմի: Ես միայն կը կամենայի ձեր ներկայութեամբ հարցաքննել Պրոտասովին և նրան կանգնեցնել ձեզ հետերես առ երես, որով ձեզ համար աւելի յարմար կը լինէր բռնել նրա սուտը: Խնդրեմ նստեցէք: Կանչեցէք պ. Պրոտասովին:

Տ Ե Ս Ի Լ. IV.

Թատական քննից գործավար, Լիզա, Կարենին: Մտնում է կեղտոտ, շնոր ու շնորհից ընկած Թեդեա:

Թեդեա (դիմերով Լիզային եւ Կարենինին).—Լիզա, Ելիզաւետա Անդրէևնա, Վկիտոր: Ես մեղաւո՞չ չեմ: Ուզում էի աւելի լաւ բան անել: Իսկ եթէ մեղաւոր եմ... Ներեցէք, ներեցէք... (Գլուխ է տալիս նրանց, իսոնարհուելով մինչեւ ոտները):

Թատ. Բ6.—Խնդրում եմ ձեզ պատասխանացէք հարցմունքներիս:

Թեդեա.—Հարցը էք:

Թատ. Բ6.—Զեր անժննը:

Թեդեա.—Խօ զիտէք:

Թատ. Բ6.—Խնդրեմ պատասխանեցէք:

Թեդեա.—Լաւ. Ֆեօդոր Պրոտասով:

Թատ. Բ6.—Զեր կոչմումը, տալիքը, դաւանութիւնը:

Թեդեա (լոռում է).—Ի՞նչպէս չէք խըդահարւում հարցնելու այդ յիմարութիւնները: Հարցը էք, ինչ որ հարկաւոր է, և ոչ թէ յիմարութիւններ:

Թատ. Բ6.—Ես խնդրում եմ ձեզ զգոյշ եղէք խօսելիս և պատասխանեցէք հարցումներիս:

Թեդեա.—Դէ, որ չէք խղճահարւում, համեցէք: Կոչումս—կանդիտատ, տարիքս—քառասուն, դաւանութիւնս—ուղղափառ: Դէ, յետի:

Թատ. Բ6.—Յայտնի էր արդիօք պ. Կարենինին և ձեր կնոջը, որ դուք

կենդանի էք, երբ ձեր հագուստը թողել էիք գետափին և ինքներդ անյայտացել:

Թեդեա.—Անշուշտ ոչ: Ես ուզում էի իսկապէս սպանել ինձ, բայց յիտոյ... դէ, այս հարկաւոր չէ պատմել: Բանն այն է, որ սրանք ոչինչ չգիտէին:

Թատ. Բ6.—Բայց ի՞նչպէս է, որ ուստիկանական պաշտօնեային ուրիշ բան էք ասել:

Թեդեա.—Ո՞ր սսակեանական պաշտօնեային: Համար երբ որ նա եկաւ ինձ մօտ Խժանով տժւնը: Ես արբած էի և սուտ-սուտ բաներ էի ասում, թէ ի՞նչ—չիմ յիշում: Այդ բոլորը յիմարութիւն է: Այժմ ես արբած չիմ և ասում եմ բոլոր ճշմարտութիւնը: Սրանք ոչինչ չգիտէին: Հաւատում էին, որ ես չըկամ: Եւ ես ուրախ էի այդ բանի համար: Եւ այս սպէս էլ կը մնար, եթէ սրիկայ Արտեմիկը չկնէր: Եւ եթէ կայ մէկը, որ մեղաւոր է, այդ ես եմ միայն:

Թատ. Բ6.—Ես հասկանում եմ, որ դուք ուզում էք մեծահոգի լինել, բայց օրէնքը ճշմարտութիւն է պահանջում: Ի՞նչու էր ձեզ փող ուղարկուած:

Թեդեա (լոռում է):

Թատ. Բ6.—Ի՞նչու չէք պատասխանում: Արձանագրութեան մէջ կը լուսնի, որ այս հարցմունքներին մեղադրեալը չպատասխանեց, և այդ կարող է վասնել ձեզ էլ, սրանց էլ: Ուրեմն ի՞նչ կասէք:

Թեդեա (լոռում է եւ յետոյ).—Ախ, պարհն քննիչ, ի՞նչպէս չէք ամաչում: Դէ, ի՞նչ էք ներս խծկում ուրիշի կիանքը: Ուրախ էք, որ իշխանութիւն ունիք, և որպէսզի ցոյց տաք այդ իշխանութիւնը, տանջում էք ոչ թէ փիզիքապէս, այլ բարոյապէս այն-

պիսի մարդկանց, որոնք հազար ան-  
գամ լաւ են ձեզնից:

Թատ. Բ6.—Ենդրում եմ ձեզ...

Թեղիա. —Հարկ չկայ խնդրելու: Կա-  
սեմ ամենը, ինչ որ մտածում եմ: Իսկ  
դուք գրեցէք (գործավարին): Գոնէ  
առաջին անգամ արձանագրութեան մէջ  
խելացի խօսքեր կը լինին (բարձրաց-  
նում է ծայնը): Ապրում են երեք  
մարդ—ես, նա, նէ: Նրանց միջև բարդ  
յարաբերութիւններ կան—բարւոյ: Կը-  
ոիւ չարի դէմ, հոգեկան այնպիսի մի  
կոփւ, որի մասին դուք գաղափար շու-  
նիք: Այդ կոփւը վերջանում է մի որոշ  
բանով, որ ամեն բան լուծում է: Ա-  
մենքը հանգստացած են: Նրանք բազ-  
դաւոր են, սիրում են իմ յիշատակը:  
Իմ անկման մէջ ես բաղդաւոր եմ նը-  
րանով, որ արել եմ այն, ինչ որ  
պէտք է, որ ես, անպիտանս, հե-  
ռացել եմ կեանքից, որպէս զի չխան-  
դարեմ նրանց, որոնք լի են կեանքով  
և լաւ մարդիկ են: Եւ մինք ամենքս  
ապրում ենք: Յանկարծ գալիս է սրի-  
կայի մէկը, մի շանտաժիստ և պահան-  
ջում է, որ ես մասնակցեմ շանտաժի:  
Ես վռնդում եմ նրան: Նա գալիս է  
ձեզ մօտ, արդարադատութեան համար  
մարտնչողիդ մօտ, բարոյականութիւ-  
նը պահպանողիդ մօտ: Եւ գուք, որ  
ամսի 20-ին փող էք ստանում կեղտոտ  
բաների համար, հագնում էք համա-  
զգեստը և թեթև սրտով ուռչում-փըք-  
ւում էք նրանց վրայ, այն մարդկանց  
վրայ, որոնց ճկոյթին էլ չարժէք,  
որոնք իրենց նախասենեակն անգամ  
ներս չեն թողնի ձեզ: Բայց դուք հա-  
սել էք և ուրախ էք, որ...

Թատ. Բ6.—Ես ձեզ դուրս կանեմ:

Թեղիա.—Ես ոչոքից չեմ վախենում,  
որովհետեւ ես դիմակ եմ, և ինձ ոչինչ  
չէք կարող անել. չկայ այնպիսի մի

դրութիւն, որ վաստ լինի իմից: Դէ,  
դուրս արէք:

Լար.—Մենք կարմիր ենք գնալ:

Թատ. Բ6.—Իսկոյն, արձանագրու-  
թիւնը ստորագրեցէք:

Թեղիա.—Եւ որքան ծիծաղելի կըլի-  
նէիք դուք, եթէ այդքան գարշելի չը-  
լինէիք:

Թատ. Բ6.—Դուրս տարէք սրան: Ես  
ձերբակալում եմ ձեզ:

Թեղիա (Կարենինային եւ Լիզային):

—Ուրեմն ներկցէք:

Լարեն. (Մօտենում է եւ ծեռոք տա-  
լիս): —Երեի, այսպէս պիտի լինէք...  
(Լիզան անցնում է: Փեղեան խոնարհ  
զլուկի է տալիս):

(Վարագոյր)

## ՊԱՏԿԵՐ 12-ՐԴ

Միջանցք շրջանային դատարանի շէնքում: Յետին գծի վրայ ապակետոր դրու, որի մօս կանգնած է սուրհանդակ: Աջ կողմը մի ուրիշ դրու, որով ներս են տանում դատի տակ եղողներին: Առաջին դրան մօտենում է Թւան Պետրովիչ Ալեքսանդրով պատառուուն հազուատով և ուզում է մտնել:

ՏԵՍԿԵՐ I.

**Սուրհանդակ և Թւան Պետրովիչ:**

**Սուր.** — Ո՞ւր: Զի կարելի: Ներս է խցկւում:

**Թւ.** Պետր.— Ինչու չի կարելի: Օրէնքըն ասում է՝ նիստերը հրապարակային են: (Հուտում են ծափեր):

**Սուր.** — Որ ասում եմ չի կարելի՝ չի կարելի: Արգելուած է:

**Թւ.** Պետր—Անկիրթ: Զես իմանում ում հետ ես խօսում: (Դուրս է զալիս մի երիտասարդ փաստարան ֆրակով):

ՏԵՍԿԵՐ II.

**Սուրհանդակ, Թւան Պետրովիչ և երիտասարդ փաստարան:**

**Եր. Փաստ.** — Ի՞նչ էք ուզում, գործունիք:

**Թւ.** Պետր.— Ոչ, ես հասարակութիւն եմ: Իսկ այս անկիրթը, այս ցերպերը չի թողնում մտնեմ:

**Եր. Փաստ.** — Բայց այստեղ ախր հասարակութեան համար չէ:

**Թւ.** Պետր.—Գիտեմ, բայց ինձ կարելի է ներս թողնել:

**Եր. Փաստ.** — Սպասեցէք, իսկոյն միջոց կը իմինի: (Ուզում է հեռանալ, հանդիպում է իշխան Արքեզիկովին):

**Սուրհանդակ, Թւան Պետրովիչ, երիտասարդ փաստարան և իօխ. Արքեզիկով:**

**Իօխ. Արք.** — Թոյլ առուէք իմանամ, ի՞նչ դրութեան մէջ է գործը:

**Եր. Փաստ.** — Փաստաբաններն են խօսում: Խօսում է Պետրուշինը: (Դարձեալ ծափերը):

**Իօխ. Արք.** — Իսկ մեղադրեալներն ի՞նչպէս են պահում իրենց:

**Եր. Փաստ.** — Մեծ արժանապատռութեամբ, մանաւանդ կարենինը և Ելիզաւէտա Անդրէևնան: Նրանց չեն դատում, այլ նրանք են դատում հասարակութեանը: Այդ զգացւում է: Այս բանից էլ բռնել է Պետրուշինը:

**Իօխ. Պետր.** — Իսկ Պետրուշինը:

**Եր. Փաստ.** — Սարսափելի յուզուած է: Ամբողջովին դողում է մի տեսակ. բայց այս հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք նրա վարած կեանքը: Բայց ինչոր ուրիշ տեսակ է յուզուած. մի քանի անգամ ընդհատեց թէ դատախազին և թէ փաստաբաններին: Ինչոր առանձին յուզման մէջ է:

**Իօխ. Արք.** — Իսկ հետևանքն ի՞նչ կը լինի, ձեր կարծիքը:

**Եր. Փաստ.** — Դժուար է ասել. երդւեալների կազմը խառն է: Ցամենայն դէպս կանխամտածում չեն ընդունի, բայց և այնպէս... (Դուրս է զալիս մի ինչոր պարոն: Իշխ. Արք. զնում է դէպի դուռը): Ուզում էք մանել:

**Իօխ. Արք.** — Այս, կուզէի:

**Եր. Փաստ.** — Դուք իշխան Արքեզիկովն էք, չ՞:

**Իօխ. Արք.** — Այս:

**Եր. Փաստ.** (սուրհանդակին) . . . Թոյլ էք: Մանէք թէ չէ, ձախ կողմը ազատ աթոռ կայ:

Տ Ե Ս Ի Լ. IV.

Սուրհանդակը ներս է թողնում իշխան։  
Աքրեգկովին։ Դուռը բացում է, եւ  
երեսում է խօսող փաստաբանը։ Սուր-  
հանդակ, երիտասարդ փաստաբան և Թւան  
Պետրովիչ։

Թւ. Պետր.— Արիտառկրատներ։ Ես  
հոգւոյ արիտառկրատ եմ, իսկ այս ա-  
ռելի բարձր է։

Եր. փաստ.— Դէ, արդէն ինձ կընե-  
րէք։ (Անցնում է)։

Տ Ե Ս Ի Լ. V.

Սուրհանդակ, Թւան Պետրովիչ և Պետրո-  
կով (շտապով զալիս է)։

Պետր.— Ա՛, բարեկ, Թւան Պետրովիչ։  
Ի՞նչ կայ։

Թւ. Պետր.— Դեռ ևս փաստաբաններն  
են խօսում, Բայց չեն թողնում մըտ-  
նեմ։

Սուր. — Իսկ դուք դալմաղալ մի ա-  
նէք այստեղ։ Այստեղ գինետուն չէ։  
(Նորից ծափեք. դոները բացում են,  
դրւս են զալիս փաստաբաններ,  
հանդիսականներ՝ տղամարդիկ եւ  
կանայք)։

Տ Ե Ս Ի Լ. VI.

Նոյնի, մի տիկին և օժիցեր։

Տիկին. — Շատ գեղեցիկ էր, ուղղակի  
լոցացրեց։

Օժիցեր.— Ամեն տեսակ սոմանից էլ  
լաւ էր։ Միայն չես հասկանում, ինչ-  
պէս այդ կինը կարող էր սիրել նրան։  
Սարսափելի տեսք ունի։

Տ Ե Ս Ի Լ. VII.

Նոյնի. Բացում է միւս դուռը, դրւս  
ել զալիս մեղաղեալները, նախ Լի-  
զան եւ Կառենինը, եւ անցնում են մի-  
ջանցքով, նրանց ետեւից Պետրան մե-  
նակ։

Տիկին. — Կամաց Ահա նա։ Տեսէք,  
ինչպէս յուզուած է։ (Տիկինը եւ օժի-  
ցէրը մօտենում են)։

Պետրան (մօտենում է Իւ. Պետրո-  
վիչին). — Բերիք,

Իւ. Պետր.— Ահա։ (Տալիս է ինչո՞ր)։

Պետրան (դում է զրպանը եւ ու-  
զում է զնալ, տեսնում է Պետրովիչի-  
վին)։ Յիմար բան է, շատ յիմար բան։  
Զանձրալի է։ Զանձրալի։ Անմիտ բան  
է։ (Ուզում է զնալ)։

Տ Ե Ս Ի Լ. VIII.

Նոյնի և Պետրովին (փաստաբան, հաստ  
կարմրերես, զուարթ, մօտենում է)։

Պետրով. — Դէ, բարեկամ, բաններս  
լաւ է գնում, միայն թէ վերջը, որ  
խօսէք, չփայցնեք։

Պետրան. — Ես չեմ էլ խօսելու։ Ի՞նչ  
ասեմ նրանց։ Չեմ խօսի։

Պետրով. — Զէ, ասել պէտք է։ Մի  
յուզուէք։ Այժմ արդէն գործը տարած  
պըծած ենք։ Դուք միայն ասացէք  
այն, ինչ որ ինձ էիք ասում, այ-  
սինքն՝ որ ձեզ դատում են միայն նը-  
րան համար, որ անձնասպանու-  
թիւն չէք գործել, այսինքն՝ չէք արել  
այն, ինչ որ յանցանք է համարւում  
թէ քաղաքացիական և թէ եկեղեցա-  
կան օրէնքով։

Պետրան. — Ոչինչ չեմ ասի։

Պետրով. — Ի՞նչնէ։

Պետրան. — Չեմ ուզում և չեմ ասի։  
Դուք միայն ասացէք ինձ՝ ամենավատ  
գէպքում ինչ պատիժ կարող է լինել։

Պետրով. — Ես ձեզ արդէն ասել եմ.  
ամենավատ գէպքում—աքսոր գէպի  
Սիրիու։

Պետրան. — Այսինքն՝ ում կաքսորեն։

Պետրով. — Ձեզ էլ, ձեր կնոջն էլ։

Պետրան. — Իսկ ամենալաւ գէպքում։

Պետրով. — Եկեղեցական ապաշխա-  
րանք և, ի հարկէ, երկրորդ ամուսնու-  
թիւնն էլ կըլուծուի։

Պետրան. — Այսինքն՝ ինձ նորից կը-  
կապէն կնոջս հետ, այսինքն՝ նրան  
ինձ հետ։

**Պետրոս.** — Հա, ինչպէս որ պէտք է լինի այդ: Մի յուղուէք: Եւ, ինդըում եմ, ասացէք, ինչ որ ձեզ ասում եմ, և գլխաւորը — աւելորդ ոչինչ չասէք: Սակայն... (Նկատելով, որ իրենց շրջապատել եւ լսում են): Ես յոգնել եմ, գնամ նստեմ: Իսկ դուք հանգստացէք առայժմ: Գլխաւորը — մի վախենաք:

**Ֆեդեա.** — Եւ ուրիշ վճիռ չի՞ կարող լինել:

**Պետրոս.** (գնալով). — Ուրիշ ոչ մի:

Տ Ե Ս Ի Լ. IX.

Եռյնի, բացի Պետրուսինց, դառական պաօտօնեայ:

**Թատ. պատ.** — Անցէք, անցէք, մի կանգնէք միջանցքում:

**Ֆեդեա.** — Իսկոյն: (Հանում է ատըրճանակը եւ կրակում է իր կրծքին. Ընկնում է: Ամենքը վազում են դէպի նա): Վնաս չունի. կարծեմ, լաւ է: Լիզայթն...

Տ Ե Ս Ի Լ. X.

Բոլոր դոներից դուրս են վազում հաղիսականներ, դատարներ, մեղաղեալներ, վկաներ: Ամենի առջեւը Լիզան: Ետեւը Մատոն, Կարենինը, Իւ. Պետրովիչը և իօխ, Սքրեգկովը:


**Լիզա.** — Այդ ինչ արիր: Ֆեդեա: Ինչո՞ւ:

**Ֆեդեա.** — Ներիր ինձ, որ չկարողացայ... ուրիշ կերպ արձակել քեզ: Քեզ համար չէ... ինձ համար այսպէս լաւ է: Զի՞ որ ևս վաղուց արդէն... պատրաստ էի...

**Լիզա.** — Դու կենդանի կը մնաս: (Բժիշկը խոնարհում է, ականջ է դնում):

**Ֆեդեա.** — Ես առանց բժշկի էլ գիտեմ... Վիկտոր, մնաս բարեաւ... Իսկ Մաշան ուշացաւ... (Լալիս է): Ինչպէս լմւ է: Ինչպէս լմւ է: Ինչպէս լմւ է: (Վախճանում է):

(Լարազոյ)



Հայաստանի Ազգային գրադարան



NL0420579

